«ՈՅԱՆԻՍԿԱ»

Azg

4 ՓԵՏՐՈՒԱՐ 1998 ՇԱԲԱԹ #17 (1520)

Մինսկի խմբի փարիզյան հանդիպումը հետաձգվեց

ԵՐԵՎԱՆ, 3 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահողների հանդիպումը, որ նախատեսված էր փետրվարի 4-ին Փարիզում, անորոշ ժամանակով հետաձգվել է: Ադրբեջանական աղբյուրները հանդիպումը հետաձգելու պատճառ են համարում Հայաստանի ներքաղաքական իրավիճակը եւ արտաքին գործերի նախարար Ալեքսանդր Արզումանյանի հրաժարականը (որն, ի դեպ, առայժմ հաստատված չէ ՀՀ նախագահի կողմից): Հայաստանի Հանրապետությունում ԱՄՆ-ի դեսպանատունը իր հերթին ի պատասխան «Նոյյան տապանի» թղթակցի հարցի հայտնեց, թե Մինսկի խմբի համանախագահողների հանդիպումը հետաձգվել է այն պատճառով, որ ՀՀ նախագահը չի մասնակցելու դրան: Մինչդեռ ՀՀ նախագահի մամուլի ծառայությունից հաղորդեցին, որ «ՀՀ նախագահը նման հանդիպման չպետք է մեկներ»: Ինչպես հայտնի է, փարիզյան հանդիպման ընթացքում ԱՄՆ, Ռուսաստանի եւ Ֆրանսիայի բարձրաստիճան դիվանագետները պետք է մշակեն դարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցությունների հետագա մարտավարությունը:

ՃԳՆԱԺԱՄ

Լեւոն Տեր-Պետրոսյանը հրաժարական տվեց

Ոստյուն դեպի անհա՞յտը, թե՞ անցում քաղաքական նոր փուլ

եվ այսպես՝ հրաժարականի մասին ասուկները, տարածայնությունները ու պահանջները վերջ գտան՝ հանրապետության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը երեկ երեկոյան, ժամը 21.45-ին ժողովրդին ուղղված հեռուստատեսային կարճ ելույթով հայտարարեց զբաղեցրած պաշտոնից հրաժարվելու մասին: Սկզբում դժվար զսպվող հուզմունքով, բայց վերջում արդեն ճակատագրի հանդեպ խծիծաղի երանգներ ստացած՝ Լ. Տեր-Պետրոսյանը, առանց խորանալու պատճառների մեջ, ներկայացրեց իր հրաժարականը: Հրաժարականը պահանջած կողմերի մասին նա բավականացավ օգտագործելով «իշխանության ձեզ հայտնի մարմինների» արտահայտությունը, այնինչ ենթադրվող «մարմինների» նման պահանջը հրապարակավ չի հնչել երբեմն, կնշանակի՝ այն եղել է առանձին խոսակցությունների կամ բանակցությունների ընթացքում: Իսկ ինչ վերաբերում է հրաժարականի տարողությանը, Լ. Տեր-Պետրոսյանն այն ներկայացրեց ոչ որպես անձնական, այլ որպես իր կուսակցության՝ «Հայաստանում խաղաղության եւ արժանապատիվ հաշտության կուսակցության» պարտություն: Սակայն, հավելեց, այդ պարտությունը լինելու է ժամանակավոր նահանջ:

Առայժմ բավականանալով այսքանով եւ մեր ու այլոց մեկնաբանությունները վերապահելով հեռացող նախագահի կոչին՝ «ցուցաբերել զսպվածություն, պահպանել երկրի անդորրը եւ անցկացնել նոր նախագահի օրինական, քաղաքակիրթ ընտրություններ»: Այլապես՝ նախագահի հրաժարականը կլինի իսկապես ոստյուն դեպի վտանգներով հղի անհայտը, գուցե նաեւ դեպի պետականության կորուստ:

Իսկ ի՞նչ կարող է պատահել այսօր, եթե ամեն ինչ ընթանա օրինական ճանապարհով: Ազգային ժողովը կարող է իր թվի (190) պարզ մեծամասնությամբ ընդունել նախագահի հրաժարականը, ինչպես նախատեսում է Սահմանադրությունը, եւ դրանով այսօր իսկ սկսվի նախընտրական պայքարը: Մինչեւ 40-րդ օր, որից հետո պետք է ընտրվի հանրապետության նոր նախագահ:

Այդ ընթացքում, երկրի գերագույն իշխանությունը կվարի Աժ նախագահ Բաբկեն Արարքցյանը: Վերջինիս հրաժարականի դեպքում՝ հանրապետության վարչապետը:

Մինչ այդ, որպես պատմական փաստաթուղթ ներկայացնում ենք նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի հայտարարությունը:

Սիրելի հայրենակիցներ,

Իշխանության ձեզ հայտնի մարմինների կողմից ինձ ներկայացվել է հրաժարականի պահանջ:

Նկատի ունենալով, որ ստեղծված իրավիճակում նախագահի սահմանադրական լիազորությունների կիրառումը հղի է երկրի աղետալի ապակայունացման լուրջ վտանգով, ես ընդունում եմ այդ պահանջը եւ հայտարարում իմ հրաժարականը:

Չեզոք եմ մնում որեւէ մեկնաբանությունից կամ գնահատականից իրադրությունը չսրելու նպատակով: Միայն հարկ եմ համարում նշել, որ իշխանության ճգնաժամում Արցախի հարցի արծարծումն ընդամենը պատրվակ էր: Խնդիրը շատ ավելի խորն է եւ կապված պետականության հիմնադրույթների, խաղաղության ու պատերազմի այլընտրանքի հետ: Իսկ կյանքը ցույց կտա, թե ով ինչ է արել Արցախի համար, եւ ով է իրականում ծախում այն: Արտաքոց ոչինչ տեղի չի ունեցել, պարզապես Հայաստանում խաղաղության եւ արժանապատիվ հաշտության կուսակցությունը պարտություն է կրել: Բարդույթների մեջ չպետք է ընկնել խաղաղության նուսակցությունը պարտություն է կրել մեզնից շատ ավելի զարգացած հասարակություններում, ինչպես, օրինակ, Իսրայելում: Բայց եւ Իսրայելում, եւ Հայաստանում դա անցողիկ է. ընդամենը ժամանակավոր նահանջ: Միեւնույն է, վաղ թե ուշ, խաղաղությունը հարթելու է իր ճանապարհը:

Կոչ եմ անում ձեզ ցուցաբերել զսպվածություն, պահպանել երկրի անդորրը եւ անցկացնել նոր նախագահի օրինական, քաղաքակիրթ ընտրություններ: Դա կլինի ուղիղ տարվա ընթացքում, ձեզ հետ միասին, մեր ստեղծած պետության հավերկի պահպանման գրավականը:

Նոր նախագահին մաղթում եմ ամենայն հաջողություն ի շահ եւ ի բարոյություն մեր ժողովրդի:

Հայտնում եմ ձեզ իմ խորին շնորհակալությունը անցած տարիներին իմ նկատմամբ ցուցաբերած վստահության եւ աջակցության համար:

Շնորհակալություն եմ հայտնում նաեւ իմ բոլոր գինակիցներին, ովքեր մշտապես անվերապահորեն եղան եւ մնում են իմ կողքին:

Եթե ընդունել եմ հրաժարականի որոշումը, դրանով ասել եմ, որ այլընտրանքը մեր պետության համար հարմարել եմ ավելի վտանգավոր:

Եթե արել եմ ինչ-որ լավ բան, չեմ ակնկալում որեւէ երախտագիտություն, շարաթիս ու սխալներիս համար հայցում եմ ձեր ներողամտությունը:

Բարին ընդ ձեզ:

Արեւմուտքի արձագանքը երեւանյան իրադարձություններին՝ ըստ BBC-ի մեկնաբանի

BBC ռադիոկայանի մեկնաբան Թոմ Դավալը երեքշաբթի երեկոյան պատասխանելով այն հարցին, թե ինչպիսին կլինի Արեւմուտքի արձագանքը Երեւանում տեղի ունեցող իրադարձություններին, ասաց հետեւյալը. «Արեւմուտքի համար դա, իհարկե, շատ տխուր իրադարձություն կլինի, քանի որ Տեր-Պետրոսյանն արդեն 7 տարի է, ինչ Արեւմուտքի բարեկամն է. դաշնակիցը եւ այնտեղ նրան շատ լավ են ճանաչում: Իսկ այժմ ոչ ոք չգիտի, թե ինչ կլինի հետագայում: Տեր-Պետրոսյանը կայունության երաշխավոր անձն էր կովկասում: Վրաստանում եւ Ադրբեջանում ղեկավարները փոխվել էին, իսկ Հայաստանում՝ ոչ: Նա Հայաստանում միակ մարդն էր, որը ցանկանում էր «մեռյալ կետից» հանել դարաբաղյան խնդիրը եւ այժմ այդ ամենը մնաց «օդից կախված»: Կարելի է ասել, որ դարաբաղյան հակամարտության կարգավորումը պետք է սկսել զրոյից: Պետք է ասել, որ Տեր-Պետրոսյանն անցած տարի չափազանց զգույշ եզրակացություններ արեց, դա փոխզիջման գագաթարի սկիզբն էր միայն: Նա խոսում էր արեւելյան տարածքների՝ Ֆիզուլու, Աղդամի մասին: Շատ հարցեր էին դեռ մնում. Քելբաջարը, Լաչինը, փախստականները, Դարաբաղի կարգավիճակի հարցը: Նույնիսկ Լեւոն Տեր-Պետրոսյանն էր արմատական, առավել եւս Դարաբաղի կառավարությունը, որը համարում է, որ դարաբաղցիները հաղթանակել են, եւ ցանկանում է պայմաններ թելադրել՝ որպես հաղթող կողմ:

Սամվել Ենգոյանը «Հայաստան»-ի տնօրենի պաշտոնակատար

ԵՐԵՎԱՆ, 3 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. ՀՀ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը բավարարեց «Հայաստան» համահայկական հիմնադրամի վարչության գործադիր տնօրեն Մանուկ Պետրոսյանի դիմումը՝ զբաղեցրած պաշտոնից հրաժարվելու մասին: ՀՀ նախագահի հրամանագրով հիմնադրամի վարչության գործադիր տնօրենի պաշտոնակատար է նշանակվել Սամվել Ենգոյանը: Այս մասին հայտնեցին ՀՀ նախագահի մամուլի ծառայությունից:

ՀՀ նախագահը չընդունեց ԿԲ խորհրդի հրաժարականը

ԵՐԵՎԱՆ, 3 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ. Փետրվարի 3-ին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին հրաժարականի դիմումներ է ներկայացրել ՀՀ Կենտրոնական բանկի խորհուրդը ողջ կազմով՝ Աշոտ Ավետիսյանը, Ներսես Երիցյանը, Ռուբեն Վալեսյանը, Հրանտ Սուվարյանը, Արթուր Ջավադյանը: Ինչպես տեղեկացրին ՀՀ նախագահի մամուլի ծառայությունից, նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը, Կենտրոնական բանկի նախագահ Բագրատ Ասատրյանի հետ խորհրդակցելուց հետո, մերժել է խորհրդի անդամների դիմումները:

Արա Սահակյանը դադարեցրել է իր անդամակցությունը «Հայագրոբանկի» խորհրդին

ԵՐԵՎԱՆ, 3 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ. Ըստ «Հայագրոբանկի» խորհրդի տեղեկատվության, Աժ փոխնախագահ Արա Սահակյանը հայտարարել է «Հայագրոբանկի» խորհրդի անդամի իր գործունեությունը դադարեցնելու մասին, ինչը բանկի խորհուրդն ի գիտություն է ընդունել: Ենթադրվում է, որ Ա. Սահակյանի այս որոշումը պայմանավորված է վերջին շրջանի ներքաղաքական իրադարձություններով:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Սղասում կամ նյարդերի պատերազմ

Տեղեկատվություններ եւ ապատեղեկատվություններ Աժ-ի միջանցքներում

ՆԱԲԻԼԵ ՄԿՐՏՉՅԱՆ

Աժ-ի փետրվարի 3-ի նիստը, ավելի ճիշտ դահլիճից դուրս խորհրդարանական մթնոլորտը կարելի էր բնութագրել մեկ բառով սղասում: Սղասում էին բոլորը առանց բացառության: Մի մասը սղասում էր ՀՀ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հրաժարականին, մի մասը Աժ նախագահի եւ փոխնախագահների հրաժարականին, մյուս մասը Ազգային ժողովը լուծարելու նախագահի դիրքորոշումը, իսկ մի փոքր մաս էլ ՀՀՇ-ի եւ «Հանրապետություն» խմբակցության նախագահի պաշտոնից Վանո Սիրադեղյանի հրաժարականին: Եվ մինչ դահլիճում ինքնակվում էր ՀՀ 1998 թ. դրամավարկային քաղաքականության ծրագիրը, «Հանրապետություն» խմբակցության շարքերը լքեցին եւս 3 պատգամավորներ Սլավիկ Հովհաննիսյանը, Վասիլ Չիլինգարյանը եւ Վազգեն Պողոսյանը: Աժ-ն ինտրիգիվ եւ ակամա ի գիտություն ընդունեց դրամավարկային քաղաքականության ծրագիրը, ինչպես նաեւ 112 «կողմով» ՀՀ էներգահամակարգի ծեռնարկություններին հարկային արտոնություններ սահմանելու մասին օրենքի նախագիծը:

Այդ ընթացքում ՀՀՇ-ի շենքում գումարվեց խորհրդակցություն, որտեղ, լուրերի արտահոսքի համաձայն, Վանո Սիրադեղյանը հայտարարել է, որ ինքը հրաժարական չի տալու ՀՀՇ նախագահի պաշտոնից եւ որ ՀՀՇ-ն դառնում է... ընդդիմություն: Սիրադեղյանի կողմնակիցները մասնավոր զրույցներում ընդգծում էին, որ նրա հրաժարականը քաղաքական պաշտոնից շանտաժի հետեւանք է: Ընդգծված (եւ փոխադարձի) նախագահամետ շրջանակները հայտարարում էին, որ Տեր-Պետրոսյանի հրաժարականից հետո Դարաբաղում կվերսկսվեն ռազմական գործողությունները:

Հրնթացս Կ. Ռուբինյանը հայտարարեց, որ ժամը 18.00-ին կայանալու է միավորման նիստ եւ նրանք, ովքեր շտապում են դուրս գալ «Հանրապետությունից», թող արագ որոշում կայացնեն:

Տես էջ 2

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՊՐԱԳԻԿ

Սկիզբը էջ 1

Հայաստանի հանրապետության համար նախատեսված 30 տոկոսն 17.30-ի փոխարեն մեկ ժամ առաջ տեղափոխվեց, իսկ Սիրադեղյանի նախատես հայտարարված ճեպազրույցը հետաձգվեց: Եվ մինչ 4 պատգամավորներ հանդես էին գալիս հայտարարություններով, զգացվում էր, որ ԱԺ-ից դուրս իշխանությունների վերնախավում ընթանում է ծանր եւ լուրջ խոսակցություն (թե՞ բանակցություններ):

«Երկրապահ» պատգամավորական խմբի նախագահ Ալբերտ Բազեյանը հայտարարությամբ հանդես եկավ, ուր մասնավորապես նշեց, որ «Արցախի հիմնախնդրի լուծման տարբերակների շուրջ առաջացած հակասությունները վերածվել են քաղաքական ճգնաժամի: ՀՀ նախագահը եւ ՀՀՇ-ն՝ որդեգրելով պարտվողական քաղաքականություն եւ ընդունելով Արցախի հարցի կարգավորման փուլային տարբերակը՝ ստեղծում են Արցախի եւ Հայաստանի ազգային անվտանգությանը սպառնացող իրավիճակ»: Հայտարարության մեջ նշվում է, որ «ոչ ժողովրդի բացարձակ մեծամասնությունը եւ իշխանության առողջ ուժերը Արցախի ապագայի հարցում տարակարծություններ չունեն»: Բազեյանն ընդգծեց, որ «Երկրապահ» խմբում տվյալ պահին ընդգրկված են 72 պատգամավորներ, որոնք պատրաստ են բոլոր ջանքերը նվիրել «հանձնաժողովում ԱԺ-ի առողջ ուժերին օրենսդիր մարմնի բնականոն գործունեությունն ապահովելու եւ ստեղծված քաղաքական ճգնաժամը հաղթահարելու համար»: Նիստի ավարտից հետո լրագրողների հետ ունեցած զրույցում ՀՀ նախագահի եւ ողջ կառավարության հրաժարականը: Առաջարկվում էր նաեւ ստեղծել «հակաճգնաժամային լայնածավալ իրատեսական ծրագիր» եւ կենսագործել: Ապա կոմկուսի անունից կոչ արվեց, որ նոր Ազգային փրկության կառավարությունը բանակցություններ սկսի Ռուսաստանի եւ Բելառուսի իշխանությունների հետ միանալու համար «Ռուսաստան-Բելառուս» դաշինքին:

Կոմկուսից հեռացված Վազգեն Սաֆարյանն իր հայտարարության մեջ ընդգծեց, որ «քաղաքական ճնշաչափի սլաքը կտրուկ բարձրացել է նախանշելով փոթորիկ»: Սաֆարյանը նկատեց, որ «գործադիր իշխանության մեջ ստեղծված ճգնաժամը տեղափոխվեց Ազգային ժողով», այսօր, ըստ պատգամավորի, «մենք կանգնած ենք իշխանափոխության փաստի առաջ»: Հայաստանի առաջադիմական միացյալ կուսակցության անունից Սաֆարյանը հայտարարեց, որ պետք է «տեղի չտալ առճակատումների հետագա խորացմանը, որն անխուսափելիորեն կհանգեցնի ներքին անկայունության»:

Մինչ այս, մինչ այն ԱԺ-ի հետնաբեմերում եւս մեկ տեղեկատվություն (կամ՝ ապատեղեկատվություն) տարածվեց, համաձայն որի ՀՀ նախագահն արդեն գրել է հրաժարականի դիմումը, եւ ընթացող «բանակցություններով» փորձում են ստանալ հրաժարականի տեքստի մեջ:

ՀՀՇ-ն եւ նախագահի մյուս թիմակիցները փորձում են նախագահի հրաժարականի տեքստն «ուղղորդել» եւ պատճառաբանել ,որպես պալատական խորվության արդյունք, իսկ կառավարության թեւը Տեր-Պետրոսյանի հրաժարականը փորձում է հիմնավորել վերջինիս՝ ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման նկատմամբ որդեգրած պարտվողականությամբ:

Վերջում ընդգծենք, որ անկախ նախագահի հրաժարականի բուն փաստից, անկախ դրա տեքստից, հստակ է, որ 1) 800 տարի պետականությունը կորցնելուց եւ անկախություն ձեռք բերելուց հետո հայ ժողովուրդը հեռացրեց Հայաստանի երրորդ հանրապետության առաջին նախագահին, 2) կարեւորագույն հարցերը չի կարելի լուծել՝ դեմ գնալով ժողովրդի կամքին եւ արհամարհելով այն լինեն դրանք ընտրություններ, թե ազգային հիմնախնդիրներ, 3) Տեր-Պետրոսյանի ստեղծած համակարգը փուլ եկավ միայն ներքաղաքական սասանումների հետեւանքով եւ փլատակների տակ մնաց հենց ինքը Լեւոն Տեր-Պետրոսյանը:

Իսկ այժմ մտածենք վաղվա օրվա մասին, չմոռանալով, որ մեծ քաղաքականությունը շարունակում է մնալ նյարդերի պատերազմ:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Սպասում կամ նյարդերի պատերազմ

ԱՍՈՒԼԻՍ

«Իր թամբած ձին կոմկուսը ոչ ոքի չի զիջի»

Հայաստանի կոմունիստները, հանրահավաքային աննախադեպ, իրենց խոստովանությամբ, անակնկալ հաջողությունից թեւավորված, երեկ հրավիրված մամուլի ասուլիսում մեկ անգամ եւս փաստեցին իրենց «հեղափոխական կամքը»՝ ներկայացնելով հանրահավաքում ընդունված բանաձեւը, որ, բացի իշխանություններին հասցեագրված մեղադրանքներից, իր թամբած ձին ուրիշի օգտագործմանը՝ չհանձնելու վճռականություն է պարունակում:

Ի՞նչ է պահանջում կոմկուսի ընդունած բանաձեւը. «Երկիրն ու ժողովրդին աղետալի վիճակի հասցրած իշխանությունների, հանրապետության նախագահի եւ ամբողջ կառավարության հեռացումը քաղաքական ասպարեզից», «ազգի ճակատագրով մտահոգ բոլոր պատասխանատու եւ կարող ուժերի միավորումը հակաճգնաժամային լայնածավալ ու իրատեսական ծրագրի շուրջ», «ազգային փրկության կառավարության» ձեւավորումը՝ որոֆեսիոնալիզմի դիրքերից: Վերջինս, ըստ կոմկուսի, պիտի դադարեցնի թալանչիական սեփականաբնորհումը, սոցիալական ոլորտում վերականգնի «աշխատավորությունից խաբեությամբ ու բռնությամբ խլված անվճար բուժպասարկման, կրթության, ապահով ծերության իրավունքը», դադարեցնի գների անհիմն բարձրացումները, արգելի հողի առուվաճառքը. Այս ամենից զատ, կոմկուսը պահանջում է ընդունել ընտրությունների նոր օրենսգիրք, «որը կբացառի խարդախությունը, կեղծիքը եւ ընտրակաշառքը», ինչպես նաեւ բանակցություններ սկսել ՌԴ եւ Բելառուսի հետ՝ «նորաստեղծ միությանն անդամակցելու հարցով»:

Սերգեյ Բաղայանն Ազգային ժողովում էր, ուստի ասուլիսն անցկացնում էին կենտկոմի քարտուղար Ռազմիկ Արզոյանը եւ Երեւանի քաղկոմի առաջին քարտուղար Յուրի Սանուկյանը: Պրն Արզոյանը «ուրտ ցավով եւ փակագծում» կոչեցին «Լրաբերի» գործընկերներին կոմկուսի միջոցառումները ծառայամտորեն եւ «գավառական հեգնանքով» ներկայացնելու համար եւ, նշելով, որ հանրահավաքային «բումը» գերազանցել է ակնկալիները, արձանագրեց «Իրադրությունը որակապես փոխվել է, ամբոխի վերածված ժողովուրդը դարձյալ ժողովուրդ է դարձել»: Իսկ պրն Սանուկյանը հավելեց, որ նախագահի հրաժարականի համար «պահանջվող» 200 հազար ցուցարարը փետրվարի 7-ի հանրահավաքի համար սահման չի լինելու:

Հարցերի պատասխաններից պարզվեց, որ, եթե «պատմական պահի թելադրանքով» իշխանության թեւերի միջեւ ընտրելու անհրաժեշտություն առաջանա, ապա կոմկուսն ազգային ուժերի կողքին կկանգնի: «Հայոց աշխարհի» ճգձրտող հարցին (ո՞ւմ դեմ եք ուղղել սոցիալական բողոքի ալիքը՝ տարիներ շարունակ գործադիր իշխանությունը ղեկավարող նախագահի՞, թե՞ տխուր ժառանգություն ստացած վարչապետի՞, որ անուրանալի ներդրում ունի՝ արցախյան ազատամարտում), պրն Արզոյանը խոստովանեց. «Հանրապետության նախագահի եւ նրա գրպանի Ազգային ժողովի դեմ»:

Մեր հարցին, «Ազգային փրկության կառավարությունում» կոմունիստական ուժերից զատ այլ քաղաքական ուժերի տեսնո՞ւմ են, պրն Արզոյանն ասաց, որ այդ մարմինը ներկայացնելու է «ազգի նվիրյալների համաստեղությունը». կոալիցիոն կառավարության ձեւավորումը շատ դժվարին խնդիր է (կարապի, գայլածկան եւ խեցգետնի մասին առակի տարբերակով), սակայն պիտի օգտագործվեն լավագույն ուժերը, թեեւ «դոմինանտի» դերում կոմկուսն է լինելու: Այլ հարցերից պարզվեց, որ «ժողովրդից վերցրածը վերականգնելու» մեխանիզմների մեջ կուլակաթափությունը չի մտնում. պետականացվելու են միայն ռազմավարական նշանակության օբյեկտները, մինչ բազմակացութաձեւությունը (ըստ այդմ՝ բազմակուսակցականությունը) խրախուսվելու է, քանզի կոմկուսը պատմությունից դասեր է քաղել եւ այլեւս չի սխալվելու:

Ակնհայտ է, սակայն, որ կոմկուսն արդեն իսկ սխալվում է՝ ենթադրելով, թե «կորուսյալ դրախտը» (Խորհրդային Միությունը կամ նման այլ կազմավորում) հնարավոր է վերականգնել եւ, մանավանդ, որ այդ «կախարդական փայտիկով» լուծել ազգային եւ սոցիալ-տնտեսական բոլոր հիմնախնդիրները:

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ

Երկրապահը չթեքվեցավ դռները բացի առնետների առաջ

Հայաստանն այսօր նոր իշխանությունների իրական ձեւավորման շեմին է: Դրականն այն է, որ գործընթացը պայմանավորված է Ղարաբաղով, այսինքն՝ հիմքն ազգային է: Ստացվեց այնպես, որ ժողովրդավարության գործակիցը մեզանում անհամեմատ ցածր է ազգայինից: 1996-ի սեպտեմբերին «ժողովրդավարության սուրը» անգոր եղավ կիսելու իշխանական եռանկյունին: Ղարաբաղը՝ կարողացավ: Դրական է նաեւ, որ փոխվում է պետական գաղափարախոսությունը...

Այլ խնդիր է, թե ովքեր են դառնալու պետական ազգային գաղափարախոսություն կրողները: Գտնվելո՞ւ են այդպիսիք, թե ոչ: Ցավալի է ազգային երեսփոխանների կեցվածքը: Սա ազգային ողբերգություն է: Անողնաշարությունը դառնում է քաղաքականություն: Անողնաշարը չի կարող ունենալ համոզմունքներ, ուստի անկարող է կրել ցանկացած գաղափարախոսություն եւ ներկայացնել:

Երկրապահները չթեքվեցան ընդունեին փախչողներից եւ ոչ մեկին: Փախչողների կեցվածքը, խոսքերը, կենսագրությունը հայտնի է: Գործելակերպը նույնպես: Կարելի է եւ անհրաժեշտ տառ առ տառ մեջբերել նրանց մտքերը, որ հակադրությունը սովորի խոսել: Երկրապահը չթեքվեցավ է գցի սեփական վարկը: Նա չթեքվեցավ է դռները բացի առնետների առջեւ: Առնետները երկրապահ չեն լինում: «Հանրապետություն» խմբակցության մասնաստումը չթեքվեցավ է դառնար ծրագիր: Խմբակցությունը ինքնամասնատվում էր առանց որեւէ միջամտության:

Պահի ահազանգն է, որ երկրապահները քաջ գիտակցելով իրենց դուռը թակողների ներքին սահմանադրությունը, այնուամենայնիվ բացեցին դռները եւ ընդունեցին նրանց: Քննանքի քաղաքականությունը վերսին հաղթանակեց: Երկրամանդների եւ երկրապահների դաշինքը խոսանում է դառնալ անհաղթելի խմբ: Դա մի հարթություն է, որը ենթադրում է նոր կուռքերի հին պաշտամունք: Եթե երկրապահները չընդունեին ոչ մեկին, արդեն որակ կստեղծվեր:

Բնականաբար դեռ ուշ չէ: Ամեն ինչ նոր է սկսվում, ուստի նախ եւ առաջ ենթադրվում է բարոյական քաղաքականություն:

Երկրապահը չթեքվեցավ է գայթակղվի մեծ քաղաքականությամբ: Նրա առաքելությունը վեր է ամենամեծ քաղաքականությունից: Նա պետք է մնա երկրապահ:

Այսօր Հայաստանում բեղմնավորվում է քաղաքական նոր գիծ: Սա ավելին է, քան, օրինակ, նախագահի հրաժարականը: Սա նոր իրավիճակ է: Նոր իրավիճակը պետք է ծնի նոր մոտեցումներ: Նաեւ կադրային քաղաքականության մեջ:

Սխալ կլինի ժխտել բոլոր հներին: Սա մեկ այլ ծայրահեղություն է:

Ներկայումս, հայաստանյան երկնքում, մի հսկայական ամպի տեսքով կախված է նոր գաղափարախոսություն: Այն առաջացել է ղարաբաղյան գոյությունից եւ այսօր համեղ պատառ է ամենատարբեր մարդկանց, քաղաքական գործիչների եւ նուսանգությունների համար: Բոլորը կամ մեծ մասը հավակնոտ են եւ ուզում են սեփականաբնորհել այդ գաղափարախոսությունը: Մինչդեռ սա ազգի սեփականությունն է:

Ղարաբաղը երկրորդ անգամ չթեքվեցավ է դառնա միջոց:

ԱՐԻՍ ՂԱՋԻՆՅԱՆ

■ *«Ազգ» օրաթերթի հունվարի 31-ի համարում տպագրված «Լույսի մարդիկ ընդդեմ անվճարունակների» հոդվածը գործնական օգուտ բերեց Երեւանի 16-րդ թաղամասի բնակիչներին: Լավագույն կերպով իրեն դրսեւորեց երջանի էլեկտրացանցի նորակազմ ղեկավարությունը: Ցուցաբերելով մարդկային վերաբերմունք, Մաշտոցի երջանի էլեկտրացանցի պետ Կարեն Մնացականյանը եւ 16-րդ թաղամասի թիվ 10 էլեկտրացանցի տեղամասի պետ Ռաֆիկ Մնացականյանը աջակցեցին անվճարունակ ընտանիքներին: Ուզում ենք մեր շնորհակալությունը հայտնել ինչպես «Ազգ» օրաթերթին, այնպես էլ հիշյալ անձնավորություններին:*

16-րդ թաղամասի մի խումբ բնակիչներ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակվում է տարին
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խմբագրություն
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրենություն / հեռ. 562863
Համակարգչային ծառայություն / 581841
Apple Macintosh համակարգչային շարվածք «Ազգ» թերթի
Յուրաքանչյուր նյութի համար պատասխանատու է հեղինակը
Նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՈՒՄԲԱԳԻԿ

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ

Գահավիժում

Հանրաքվեի ներկա քաղաքական ճգնաժամում ամենաանհանձելի վիճակի մեջ հայտնվածները... լրագրողներս ենք: Մինչեւ մի բան գրում ենք, մինչեւ տպագրվում է՝ անհուսալիորեն ուշանում ենք, իրադարձությունները հաջորդում են գահավեժ արագությամբ: Այս պահին, երբ գրվում են այս տողերը, արդեն հայտնի են մի շարք բարձրաստիճան պաշտոնատարների (Վանո Սիրադեղյան, Ալիկ Արզումանյան, Բագրատ Ասատրյան, Գալուստ Գամազյան, Մանուկ Պետրոսյան) հրաժարականների փաստերը: Բայց ես համոզված չեմ, թե մինչեւ թերթի ներկա համարը ընթերցողներին հասնելը չեն հետեւի է՛լ ավելի ցնցող նորություններ, այլ պաշտոնատարների, ընդհուպ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հրաժարականները:

Կառավարող քաղաքական ուժի բարոյական սնանկացումը առավել քան ակնհայտ դարձավ Արցախի հարցում որդեգրած «փոխզիջումային» կեցվածքով, որը հանրությունը միանշանակորեն գնահատեց իբրեւ պարտվողականություն: Այս կեցվածքի «հավատո հանգանակը» ՀՀ նախագահի 1997 թ. սեպտեմբերի 26-ի մամլո ասուլիսն էր եւ նոյեմբերի 1-ի «Պատերազմ, թե՞ խաղաղություն» հոդվածը: Հանրությունը թե՛ Հայաստանում, թե՛ Արցախում, թե՛ սփյուռքի հիմնական շրջանակներում բառացիորեն ծառս եղավ ասուլիսում ու հոդվածում շարադրված տեսակետների դեմ: Սակայն գահավիժումն սկսվեց բավական ուշ՝ պաշտպանության նախարարի հունվարի 23-ի մամուլի ասուլիսից արդեն մեկ շաբաթ հետո, երբ պարզ դարձավ, որ վարչախումբը այլեւս նախկին կուռ միասնությամբ աչքի չի ընկնում եւ ամենեւին վստահ չկա, թե կրկին տանկեր կհանվեն ժողովրդի դեմ՝ ի պաշտպանություն Լեւոն Տեր-Պետրոսյանի՝ ռեժիմի: Այժմ անհայտ է «ուժի տեղաշարժը» դեպի հակառակ թեւը՝ դեպի վարչապետ Ռոբերտ Քոչարյանի, «ուժայիններ» Վազգեն Սարգսյանի, Սերժ Սարգսյանի «թեւը»: Այս եռյակը, որի դեմս «երկրապահ կամավորականների» միության նախագահ, Աժ պատգամավոր Ալբերտ Բազեյանի՝ կարող է նաեւ «հաոյակ» կոչվել, հանդիսանում է իշխանության իրական լծակներին տիրապետող ուժերի միջուկը, եւ այժմ առանց որեւէ չափազանցության կարելի է արձանագրել, որ ծանրության այս նոր «կենտրոնի» շուրջն են համախմբվում շատ գործիչներ, նաեւ «տանիի» հետամուտ անձինք:

Թե հետո ի՞նչ դուրս կգա դրանից՝ կտեսնենք, սակայն փաստն այսօր այդ է: ՀՀՇ-ն, իբրեւ քաղաքական ուժ իշխանության գալով արցախյան ալիքի վրա, հենց Արցախի հարցում զիջողականություն ցուցաբերելով էլ թույլ տվեց իր ամենամակաբերական սխալը, եւ այսօր կայծակնային արագությամբ հեղինակազրկվում-մերժվում է: Այդ «գործընթաց» ամենից ավելի ցայտուն երեւում է խորհրդարանական խմբակցությունների՝ կազմերի արագ փոփոխություններով: ՀՀՇ-ի «թեւի տակ» նախորդ խորհրդարանական ընտրություններում ծվարած «սատելիտներից» մեկը (ՀՀԿ) արդեն հայտարարել է «Հանրապետություն» խմբակցությունից դուրս գալու մասին: Նույնն է պատրաստվում անելու ՔՊՄ-ն, թեեւ ոչ մեկը, ոչ մյուսը նախագահի, հետեւաբար եւ՝ «Հանրապետություն» խմբակցության որդեգրած քաղաքականության դեմ արտահայտվելու քաջությունը չունեցան գոնե 1997-ի նոյեմբերի 1-ից հետո: Ավելին, խմբակցության անդամ կուսակցությունները կամ հայտարարություններով, կամ լռելյայն իրենց համերաշխությունն էին հայտնում ՀՀՇ-ի վարչության հունվարի 21-ի «Հայտարարությանը», որը ոչ այլ ինչ էր, եթե ոչ դրանից 2-3 օր առաջ կատարված «ահաբեկչությունների» մեղքը կառավարության վրա բարդելու փորձ եւ արցախյան խնդրում նախագահի քաղաքականությունը «վճռականորեն» պաշտպանելու հորդոր: «Սատելիտների» այս խմբից ամենից ավելի հեռուն գնաց ՍԴ Հնչակյան կուսակցությունը, որը հրապարակավ պահանջում էր երկրում արտակարգ դրություն հայտարարել, հասկանալի է, «սիրելի վարչապետին ու սպարապետին» (եւ նրանց պես մտածողներին) բիրտ ուժով չեզոքացնելու համար: Բարեբախտաբար, այլեւս այդ հոխորտանքն իրականացնելու «ուժ» չկար... Ինչ վերաբերում է խորհրդարանական «գործընթացներին», ապա այս պահին երբեմնի ամենազոր «Հանրապետությունը» դեռեւս ունի 56 անդամ: Փոխարենը անչափ հզորացել է «երկրապահը»՝ 72 անդամ: «Երկրապահներին» է միացել Գեղամ Ղարիբջանյանի «Սոցիալական պետությունը» (10 հոգի): «Հանրապետությունից» «երկրապահ» են «անցել» 27 հոգի, «Բա-



ռեփոխումներից» 11 եւ այլն: Առայժմ դեռ ոչ մեկին միանալու հայտարարություն չեն արել «Հանրապետությունից» դուրս եկած եւս 13 պատգամավոր:

Այս տեղաշարժերին անձամբ ես հանգիստ եմ վերաբերվում, գտնում եմ, որ այդպես էլ պետք է լիներ, մենք Հայաստանում ենք ապրում: Չարժե անգամ հեգնել, թե ինչո՞ւ, օրինակ, Մերուժան Տեր-Գուլանյանը առնվազն մեկ տարի ուշացումով գլխի ընկավ, որ ինքը «անկախ հեռուստաընկերություն է ղեկավարում եւ բնական է, եթե անկախ լինի», մարգարեներ Արարատ Գոմցյանը, Պավլիկ Ասատրյանը, Դավիթ Զադոյանը, որ ընդամենը երեկ՝ նախագահին իրենց տնօրինությանը հանձնված տարածքներում ընդունում էին իբրեւ կիսաաստծո, արտագին զեղումներով հավատիացնելով ոչ միայն իրենց անձնական նվիրվածությունը նրան, այլեւ «100 տոկոսով երաշխավորելով մարզի ողջ բնակչության համար», այսօր սահմանազատվում են «Հանրապետությունից» (ասել է՝ նախագահից):

«Կշեռքի ծանր թաթին» նայելու հոգեբանությունը շատերին է հատուկ, դժբախտաբար, որքան էլ բարոյական չէ: Խնայում եմ եւ չեմ տալիս շատ այլ «փախստականների» անունները. ցուցակները հրապարակվում են, իսկ այս ռեժիմին յուրաքանչյուրի մատուցած մեծ ու փոքր «ծառայությունները» լավ հայտնի են: Իմ ասելիքն ա՛յլ է. այս գահավիժումը, որքան էլ սպասելի, անակնկալ եւ արագ կատարվեց: Ճգնաժամը անվերջ շարունակվել չի կարող, եւ՝ նոր ընտրություններն են՝ նախագահական եւ խորհրդարանական: Դրանք տարերի հետեւում չեն: Այս անգամ եկեք այնպես անենք, որ ընտրություններն անցնեն իրոք ազնիվ ու արդար, եւ թո՛ղ ընտրվեն նրանք, ում ժողովուրդն իսկապես ձայն է տալու: Չկա ավելի մեծ ոճիր, քան ժողովրդի կամքի բռնաբարումն է եւ նրա կատարած ընտրության արդյունքների բռնի խեղաթյուրումը: Եթե կրկին ՀՀՇ-ի կողմից պրակտիկա դարձած այդ ճանապարհով գնացինք, ապա չենք խուսափելու նոր գահավիժումներից:

ՌՈՒԲԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ամենայն հայոց կաթողիկոսի հովվապետական այցը Գերմանիայում շարունակվում է: Ի պատիվ նրա հունվարի 30-ին երեկոյան, Բոննում գործող ՀՀ դեսպանությունը ընդունելություն կազմակերպեց նշանավոր «Լա Ռեդուտում»: Ներկա էին Բոննում հավատարմագրված դիվանագիտական կորպուսը, Գերմանիայի կաթոլիկ, բողոքական եկեղեցիների, բնականաբար նաեւ Հայ առաքելական եկեղեցու Գերմանիո թեմի ներկայացուցիչներ, կառավարական բարձրաստիճան այրեր, համալսարանականներ, հայ համայնքի ներկայացուցիչներ:

Վեհափառ հայրապետին ողջունեցին Բոննի քաղաքապետ պրն Մյուլլերը, հոգեւոր դասի ներկայացուցիչներ, համալսարանական գիտնականներ: 2 ժամ տեւած ընդունելությունը նշանավորվեց նաեւ մատուցված անակնկալով: Արեւելագետ, հայագետ, Լյովենի (Բելգիա) համալսարանի պրոֆեսոր Անդրեա Բարբարա Շմիդտը Վեհափառին հանձնեց հայոց ձեռագրերի մի հրատարակության առաջին օրինակը, որն օր առաջ էր լույս տեսել. 12-րդ դարի Կիլիկիո կորած մի Ավետարան, որը գտնվել էր 2 տարի առաջ Բոլոնիայում եւ որը դոկտոր Շմիդտի խոսքերով, «համաշխարհային մշակույթի հարստություն է»:

Գերմանական մամուլն անդրադարձավ Ամենայն հայոց կաթողիկոսի այցին, հեռուստատեսությունը լուսաբանվեց վարչապետի եւ արտգործնախարարի հետ հանդիպումներն անպատ երկնագույն դիտարաստանին չհերեւացին: (Ըստ որոշ աղբյուրների, ARD հեռուստաալիքը Գարեգին Ա-ի այցի մասին մի հաղորդում պատրաստել է, որը հայտնի չէ, թե երբ կհեռարձակվի): Այնինչ վարչապետի հետ մեկ ժամյա զրույցը վկայում է, թե հանդիպումն այդքան էլ «հերթապահ անկարեւոր» լինել չէր կարող: Մանավանդ այս օրերին, երբ եվրոպական միջնորդ երկրների ղեկավարների համար Հայաստանն ու Ղարաբաղը տոսկ աշխարհագրական փոքր միավորներ չեն: Բնականաբար առաջին հարցս Ամենայն հայոց կաթողիկոսին.

– Ձեր այցելության ընթացքին երկխոսեցիք գերմանական կառավարական, պաշտոնական շրջանակների հետ: «Ազգի» թղթակցիս հետաքրքրում է, թե հատկապես ի՞նչ խոսեցիք վարչապետ Հելմուտ Քոլի եւ արտգործնախարար Կլաուս Քինկելի հետ: Հայաստանի կացության, ղարաբաղյան հիմնախնդրի մասին խոսեցի՞ք:

– Ինձ համար հովվապետական դիրքորոշումներ ունեմ ձեր երկրների պետության ղեկավարներին, որոնք նորածին մեր հանրապետությանը զորավիգ են կանգնում: Աշխարհը պետք ունի խաղաղության եւ արդարության, մանավանդ այս տարածաշրջանում Կովկասում: Եկեք բոլորս միասին ձեռք ձեռքի ջանանք, որ փորձությունները լուծվեն խաղաղ միջոցներով, մարդուն դատիվ բերող եղանակներով: Թող Աստված օրհնի Գերմանիան եւ ձեր բոլորի երկրները:

Վեհափառ հայրապետին ողջունեցին Բոննի քաղաքապետ պրն Մյուլլերը, հոգեւոր դասի ներկայացուցիչներ, համալսարանական գիտնականներ: 2 ժամ տեւած ընդունելությունը նշանավորվեց նաեւ մատուցված անակնկալով: Արեւելագետ, հայագետ, Լյովենի (Բելգիա) համալսարանի պրոֆեսոր Անդրեա Բարբարա Շմիդտը Վեհափառին հանձնեց հայոց ձեռագրերի մի հրատարակության առաջին օրինակը, որն օր առաջ էր լույս տեսել. 12-րդ դարի Կիլիկիո կորած մի Ավետարան, որը գտնվել էր 2 տարի առաջ Բոլոնիայում եւ որը դոկտոր Շմիդտի խոսքերով, «համաշխարհային մշակույթի հարստություն է»:

Գերմանական մամուլն անդրադարձավ Ամենայն հայոց կաթողիկոսի այցին, հեռուստատեսությունը լուսաբանվեց վարչապետի եւ արտգործնախարարի հետ հանդիպումներն անպատ երկնագույն դիտարաստանին չհերեւացին: (Ըստ որոշ աղբյուրների, ARD հեռուստաալիքը Գարեգին Ա-ի այցի մասին մի հաղորդում պատրաստել է, որը հայտնի չէ, թե երբ կհեռարձակվի): Այնինչ վարչապետի հետ մեկ ժամյա զրույցը վկայում է, թե հանդիպումն այդքան էլ «հերթապահ անկարեւոր» լինել չէր կարող: Մանավանդ այս օրերին, երբ եվրոպական միջնորդ երկրների ղեկավարների համար Հայաստանն ու Ղարաբաղը տոսկ աշխարհագրական փոքր միավորներ չեն: Բնականաբար առաջին հարցս Ամենայն հայոց կաթողիկոսին.

– Ձեր այցելության ընթացքին երկխոսեցիք գերմանական կառավարական, պաշտոնական շրջանակների հետ: «Ազգի» թղթակցիս հետաքրքրում է, թե հատկապես ի՞նչ խոսեցիք վարչապետ Հելմուտ Քոլի եւ արտգործնախարար Կլաուս Քինկելի հետ: Հայաստանի կացության, ղարաբաղյան հիմնախնդրի մասին խոսեցի՞ք:

– Ինձ համար հովվապետական դիրքորոշումներ ունեմ ձեր երկրների պետության ղեկավարներին, որոնք նորածին մեր հանրապետությանը զորավիգ են կանգնում: Աշխարհը պետք ունի խաղաղության եւ արդարության, մանավանդ այս տարածաշրջանում Կովկասում: Եկեք բոլորս միասին ձեռք ձեռքի ջանանք, որ փորձությունները լուծվեն խաղաղ միջոցներով, մարդուն դատիվ բերող եղանակներով: Թող Աստված օրհնի Գերմանիան եւ ձեր բոլորի երկրները:

Վեհափառ հայրապետին ողջունեցին Բոննի քաղաքապետ պրն Մյուլլերը, հոգեւոր դասի ներկայացուցիչներ, համալսարանական գիտնականներ: 2 ժամ տեւած ընդունելությունը նշանավորվեց նաեւ մատուցված անակնկալով: Արեւելագետ, հայագետ, Լյովենի (Բելգիա) համալսարանի պրոֆեսոր Անդրեա Բարբարա Շմիդտը Վեհափառին հանձնեց հայոց ձեռագրերի մի հրատարակության առաջին օրինակը, որն օր առաջ էր լույս տեսել. 12-րդ դարի Կիլիկիո կորած մի Ավետարան, որը գտնվել էր 2 տարի առաջ Բոլոնիայում եւ որը դոկտոր Շմիդտի խոսքերով, «համաշխարհային մշակույթի հարստություն է»:

Գերմանական մամուլն անդրադարձավ Ամենայն հայոց կաթողիկոսի այցին, հեռուստատեսությունը լուսաբանվեց վարչապետի եւ արտգործնախարարի հետ հանդիպումներն անպատ երկնագույն դիտարաստանին չհերեւացին: (Ըստ որոշ աղբյուրների, ARD հեռուստաալիքը Գարեգին Ա-ի այցի մասին մի հաղորդում պատրաստել է, որը հայտնի չէ, թե երբ կհեռարձակվի): Այնինչ վարչապետի հետ մեկ ժամյա զրույցը վկայում է, թե հանդիպումն այդքան էլ «հերթապահ անկարեւոր» լինել չէր կարող: Մանավանդ այս օրերին, երբ եվրոպական միջնորդ երկրների ղեկավարների համար Հայաստանն ու Ղարաբաղը տոսկ աշխարհագրական փոքր միավորներ չեն: Բնականաբար առաջին հարցս Ամենայն հայոց կաթողիկոսին.

– Ձեր այցելության ընթացքին երկխոսեցիք գերմանական կառավարական, պաշտոնական շրջանակների հետ: «Ազգի» թղթակցիս հետաքրքրում է, թե հատկապես ի՞նչ խոսեցիք վարչապետ Հելմուտ Քոլի եւ արտգործնախարար Կլաուս Քինկելի հետ: Հայաստանի կացության, ղարաբաղյան հիմնախնդրի մասին խոսեցի՞ք:

– Ինձ համար հովվապետական

ԲՈՆՆ

Ընդունելություն՝ ի պատիվ Վեհափառ հայրապետի

ԳԴՀ-ում ՀՀ դեսպան Աշոտ Ոսկանյանի ելույթից հետո, բարձրախոսին մոտեցավ Ամենայն հայոց կաթողիկոս Տ.Տ. Գարեգին Ա-ը: «Այս պահը մասնավոր նշանակություն ունի ամբողջ հովվապետական այցելության իմ շրջանի համար: Իբրեւ կաթողիկոս Ամենայն հայոց իմ հայրական հոգեւոր ծառայության դարտֆն եմ համարում ճանչնալու իմ ժողովրդին եւ ճանչվելու իմ ժողովրդից: Իմ առաջին այցելությունն է այս Գերմանիո մեր հայոց նորակազմ թեմին եւ Գերմանիո քաղաքների մեջ տարածված գործող աշխատող մեր զավակներին: Այս պահը եզական նշանակություն ունի ինձ համար, որովհետեւ իմ նախորդներից ոչ մեկը առանց դարեւ նույնիսկ առաջ երբ որիշ երկիր էր գնում, իրենց երկրի իրենց պետության դեսպանատան մեջ երբեք չէր ընդունվում: Եթե ես էլ 7 տարի առաջ եկած լինեի, ես էլ պիտի չունենայի մեր հարգարժան դեսպանը: Այսօր Աստծուն այնքան փառք ենք տալիս, որ վերադարձանք Աստծու օրհնությամբ մեր երկրի ազատությունն ու անկախությունը: Այս երկրում եւ եվրոպական ուրիշ երկրներում առհասարակ հայության մասին էն գաղափարը կա, որ մենք ջարդվել ենք, գենոցիդի ենթարկվել, մի խոսքով հայը գաղթական հայի պատկեր է ցույց տվել աշխարհին: Փառք Աստծո, այսօր XX դարը վերջացնում ենք արեւը տեսնելով մեր երկրում ազատության, անկախության արեւը, դարասկզբին տեսանք խավարը, մութը, արյունը, լացը: Ես իմ շնորհակալությունը հայտնեցի այս երկրի վարչապետին դոկտ. Հելմուտ Քոլին, նաեւ այսօր արտգործնախարար պրն Քինկելին, նաեւ ձեր անձերի միջոցով իմ շնորհակալություններն եմ հայտնում ձեր երկրների պետության ղեկավարներին, որոնք նորածին մեր հանրապետությանը զորավիգ են կանգնում: Աշխարհը պետք ունի խաղաղության եւ արդարության, մանավանդ այս տարածաշրջանում Կովկասում: Եկեք բոլորս միասին ձեռք ձեռքի ջանանք, որ փորձությունները լուծվեն խաղաղ միջոցներով, մարդուն դատիվ բերող եղանակներով: Թող Աստված օրհնի Գերմանիան եւ ձեր բոլորի երկրները:

Վեհափառ հայրապետին ողջունեցին Բոննի քաղաքապետ պրն Մյուլլերը, հոգեւոր դասի ներկայացուցիչներ, համալսարանական գիտնականներ: 2 ժամ տեւած ընդունելությունը նշանավորվեց նաեւ մատուցված անակնկալով: Արեւելագետ, հայագետ, Լյովենի (Բելգիա) համալսարանի պրոֆեսոր Անդրեա Բարբարա Շմիդտը Վեհափառին հանձնեց հայոց ձեռագրերի մի հրատարակության առաջին օրինակը, որն օր առաջ էր լույս տեսել. 12-րդ դարի Կիլիկիո կորած մի Ավետարան, որը գտնվել էր 2 տարի առաջ Բոլոնիայում եւ որը դոկտոր Շմիդտի խոսքերով, «համաշխարհային մշակույթի հարստություն է»:

Գերմանական մամուլն անդրադարձավ Ամենայն հայոց կաթողիկոսի այցին, հեռուստատեսությունը լուսաբանվեց վարչապետի եւ արտգործնախարարի հետ հանդիպումներն անպատ երկնագույն դիտարաստանին չհերեւացին: (Ըստ որոշ աղբյուրների, ARD հեռուստաալիքը Գարեգին Ա-ի այցի մասին մի հաղորդում պատրաստել է, որը հայտնի չէ, թե երբ կհեռարձակվի): Այնինչ վարչապետի հետ մեկ ժամյա զրույցը վկայում է, թե հանդիպումն այդքան էլ «հերթապահ անկարեւոր» լինել չէր կարող: Մանավանդ այս օրերին, երբ եվրոպական միջնորդ երկրների ղեկավարների համար Հայաստանն ու Ղարաբաղը տոսկ աշխարհագրական փոքր միավորներ չեն: Բնականաբար առաջին հարցս Ամենայն հայոց կաթողիկոսին.

– Ձեր այցելության ընթացքին երկխոսեցիք գերմանական կառավարական, պաշտոնական շրջանակների հետ: «Ազգի» թղթակցիս հետաքրքրում է, թե հատկապես ի՞նչ խոսեցիք վարչապետ Հելմուտ Քոլի եւ արտգործնախարար Կլաուս Քինկելի հետ: Հայաստանի կացության, ղարաբաղյան հիմնախնդրի մասին խոսեցի՞ք:

– Ինձ համար հովվապետական դիրքորոշումներ ունեմ, այսօրվա դժվարին մեր դայմաններ, պիտի ավելացնեմ նաեւ, որ անխուսափելի է, որ մենք Ղարաբաղի մասին չխոսեինք: Խոսեցինք եւ ասացի ամեն ինչ դրեք է անել, որ խոսակցությունները շարունակվեն, եւ մենք խուսափենք կռիվներից եւ նոր զինական բախումներից, որոնք կարող են ավելի բարդացնել մեր աղազայի գործը շրջանում խաղաղություն ստեղծելու տեսակետից:

– Այդուհանդերձ ի՞նչ խոսակցություն ծավալվեց Ղարաբաղի մասին:

– Ասացի կարծեմ, թե խոսեցինք եւ Ղարաբաղի հարցի, եւ Հայաստանի տնտեսական, ընկերային կյանքի դայմանների զարգացման համար:

– Ղարաբաղյան հիմնախնդիրն այսօր բեւեռացրել է հայությանը Ղարաբաղի եւ Հայաստանի իշխանությունների տեսակետներ կտրուկ տարբերվում են: Ղարաբաղի իշխանությունները չեն դատապարտվում ԵԱՀԿ որոշումներն ընդունել: Ձեր հանդիպումներում խոսվե՞ց դրանց մասին. Ձեզ որեւէ բան ասվեց:

– Այդպիսի մանրամասնությամբ ոչ: Որովհետեւ ես այնտեղ չեմ այս օրերին եւ ուղղակիորեն ծանոթ չեմ այն բոլոր իրադարձություններին, որոնք կատարվում են, հետեւաբար վերադարձիս բնականորեն ուղղակիորեն կհետաքրքրվեմ եւ ինչ-որ մեր եկեղեցու կողմից դրեք է անել, անդայման կանեմ:

– Իբրեւ Ամենայն հայոց կաթողիկոս Ղարաբաղի՞ ժողովրդի ընտրած ուղին պիտի դատապանեք:

– Իբրեւ Ամենայն հայոց կաթողիկոս ինչ որ մեր ժողովրդի գերագույն շահն է, ես դրան համաձայն կշարժվեմ:

ԱՆԱՏԻՍ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Իրանի իսլամական հեղափոխության 19-ամյակի առիթով

Իրանի Իսլամական Հանրապետության հեղափոխության 19-րդ տարելիցի տոնակատարությունների առաջին օրը հատկանշական էր Հայաստանի զանգվածային լրատվության միջոցների աշխատակիցների համար:

Հայաստանում Իրանի դեսպան Համիդ Ռեզա Նիֆար էսֆահանին իր տանը ընդունելություն էր կազմակերպել: Հրավիրյալների մեջ էին նաեւ «Ազգի» գլխավոր խմբագիր Հ. Ավետիսյանը եւ աշխատակից-լրագրողներ:

Հյուրասիրության սկզբում ծավալված շահեկան զրույցում նշվեցին հայ-իրանական բարեկամության էջերը եւ այսօր գոյություն ունեցող քաղաքական, տնտեսական ու մշակութային ջերմ հարաբերությունները: «Ազգի» խմբագիրը հայտնեց, թե «Ազգը» արդեն նախապատրաստվել է հատուկ կերպով նշելու Իրանի իսլամական հեղափոխության 19-րդ տարեդարձը:

Զրույցները շարունակվեցին ընթրիքի սեղանի շուրջը, ապա՝ հիշատակի

«անկախության» լուսանկարներով, մեծարգո դեսպանի եւ դեսպանատան աշխատակազմի հետ ընդունելությունը ավարտվեց դարձյալ հանդիպելու խոստումով: Հիշեցնենք, որ հեղափոխության 19-ամյակի առիթով դեսպանությունը կազմակերպում է մի շարք միջոցառումներ

Հ. ՄՈՒՍԱԵՓՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Ազգային

Լեւոն Հայրապետյան. «Չեմ սիրում, երբ արեւը նկարում են առանց բծերի»

Ղարաբաղյան համառությունը արդարության զավակն է

Տունիսյան մի շոգ օր զանգահարեց Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ եպիսկոպոսը եւ առաջարկեց իր հետ մեկնել էջմիածին, որտեղ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ն մեր ընկեր Լեւոն Հայրապետյանին եւ նրա տիկնոջը՝ Թամարային, հանձնելու էր Հայաստանյայց առաքելական եկեղեցու ամենաբարձր պարգեւը՝ Սբ. Գրիգոր Լուսավորչի շքանշանը:

Հանձնման արարողությանը ներկա էր ընդամենը մի քանի մարդ, եւ հեռուսալրագրողներից ոչ ոք չկար: Կաթողիկոսը համառոտակի պատմեց, ինչպես ինքն արտահայտվեց, Լեւոն Հայրապետյանի եւ Տամարայի բարոյական սխրանքի մասին, որոնք ժամանակից, խորհրդային իշխանությունից, անընդմեջ հրեւակոծությունից ու հրթիռակոծությունից տուժած Գանձասարի տաճարի վերականգնմանը հասկացրել էին 100 հազար դոլար: Նա հիշեցրեց, թե որքան դժվար են ընթանում եւ քանկ նստում տաճարների վերականգնումն ու վերանորոգումը: Ափսոսանք հայտնեց, որ Տամարա Հայրապետյանը չի կարողացել էջմիածին գալ շքանշանն ստանալու:

Լեւոնը պատասխան խոսք ասաց գրական հայերենով: Խոսքն ավարտելով, նա բաճկոնի ներսի գրպանից հանեց ինչ-որ գրքույկ եւ այնտեղ թվերով ու տառերով գրեց. «100 հազար դոլար՝ Գանձասարի տաճարի վերականգնման աշխատանքների ավարտման համար»:

Վաղուց գիտեմ այդ մարդու, նրա բարոյական սխրանքների եւ այն մասին, որ նրա համար ամենածանրակշիռ խոսքը արդարությունն է: Նա սիրում է կրկնել. «Ղարաբաղը բարձրագույն արդարություն է»:

Լեւոն Հայրապետյանը ծնվել է Վանք գյուղում սրբազան Գանձասար լեռան ստորոտում, որի գագաթին նրա նախնիները ավելի քան 700 տարի առաջ հոյակապ տաճար կառուցեցին: Այնտեղ ադրել է վեց տարի, այսինքն մի ամբողջ կյանք: Սարոյանը մի առիթով նշել է, որ մարդը մարդ է դառնում առաջին 5-7 տարում, իսկ մնացյալն արդեն բերովի է, եթե կուզեք՝ օտար: Այն ժամանակ նա, իհարկե, չէր էլ իմանում, որ իր հայրը՝ Գուրգենը, սերում է Ղարաբաղի նշանավոր Հասան-Ջալալյանների իշխանական տոհմից, մայրը՝ Անժելան, Նախիջեւանի հոգեւորականության Տեր-Հարությունյանների հայտնի տոհմից: Հայրենի Վանք գյուղում ծնվել են տասնյակ պետական գործիչներ, իսկ մայրական Կզնուս գյուղում է ծնվել Անժելայի հարազատ հորեղբայրը՝ մեծ զորավար Գարեգին Նժդեհը (Տեր-Հարությունյան):

1954 թ., երբ նախկին Վլադիկավկազը, կամ Օրջոնիկիձեն եւ կամ Չաուշիկաուն կրկին վերանվանվեց Օրջոնիկիձե, Հայրապետյանների ընտանիքը տեղափոխվեց այդ քաղաք: Լեւոնը տիրապետում էր միայն Ղարաբաղի բարբառին, եւ նրա համար դժվար էր սովորել ռուսական դպրոցում. 3 քառորդ նա միայն երկուսներ էր ստանում, բայց 4-ին ավարտեց գերազանց: Իսկ ամառային արձակուրդից հետո ընտանիքը տեղափոխվեց Երեւան:

Ոչ թե նա էր դժվարություններ փնտրում, այլ դժվարություններն ասես իրենք էին նրան գտնում: Ընդունվեց Երեւանի պետհամալսարանի իրավաբանական ֆակուլտետ: Դժվար էր, բայց որոշեց հենց այդտեղ ընդունվել, թեեւ նրան չէր հրապուրում դատախազի, դատավորի կամ փաստաբանի ուղին: Ընդունվեց, բայց 3-րդ կուրսից թողեց ուսումը: 1968 թ. ամռանն ընդունվեց ԽՍՀՄ ՊԱԿ-ի բարձրագույն դպրոց, իսկ աշնանը որոշ համակուրսեցիների հետ տարածեց թռուցիկներ. «Խորհրդային Միությունը Չեխոսլովակիայի հոկեյի տափօղակներին հակադրեց իր տանկերը»:

Այսպիսով: ՊԱԿ-ի բարձրագույն դպրոցը եւս դուր չեկավ նրան: Ամեն ինչ սկսեց նորից: Ընդունվեց Մոսկվայի պետհամալսարանի պատմության ֆակուլտետ, սովորեց 2 տարի եւ խորհրդածություններից, բազմաթիվ ուղեգրով մեկնեց Հյուսիս՝ Ուրենգոյ, դարձավ ՀամԼԿԵՄ 18-րդ համագումարի անվան կոմերիսական հարվածային ջոկատի հրամանատար: Շուտով Լեւոն Հայրապետյանի անունը հայտնվեց միութենական երիտասարդական մամուլում: Ես նրա մասին առաջին անգամ լսեցի հայ հայտնի գազագործ Գեորգի Թաքարյանից, որը մի անգամ խոստովանեց, թե ամեն անգամ Ուրենգոյ մեկնելիս ինքը իմանում էր Լեւոնի նոր պատշտոնի մասին: Հետո Թաքարյանն ասաց, որ տեսադաշից կորցրել է Լեւոնին. նա չգիտեր, որ իր երիտասարդ հայրենակիցը հասցրել է տեղափոխվել է՛լ ավելի հյուսիս՝ Յամալ թերակղզի, որտեղ «Յամալնեֆտեգազգեոլոգիա» միավորումում խոր հորատման ամենահյուսիսային Տամբեյի արշավախմբի պետի տեղակալն էր: Տունդրայում, բեւեռային շրջագծից այն կողմ, հավերժական սառածության եւ կիսամյա անընդմեջ մթության պայմաններում նա ղեկավարում էր վիթխարի շինարարություն: Մոսկվացի գործիչները հաճախ էին այցելում նրան: Հայկական ԽՍՀ-ի քառապատիկ տարածքն ունեցող հսկայական թերակղզում Լեւոն Հայրապետյանը վերահսկում էր ոչ միայն շինարարությունը, այլեւ «ընդհանուր» եւ կադրային հարցերը: Երկար ժամանակ կատարում էր արշավախմբի (որը մի ամբողջ պետական կազմավորում էր) պետի պարտականությունները: Ավելի ու ավելի հազվադեպ էր հաջողվում ժամանակ գտնել Արցախ այցելելու համար:

...Կերտելով բազմաթիվ ավաններ, հավաքելով բանվորների մի ամբողջ բանակ, նրանց ոսկու սարեր խոստանալով, պետությունն այդուհանդերձ չէր կարողանում ապահովել այսպես կոչված աշխատանքի ճակատը: Հյուսիսում գործազրկությունը սոսկալի երեւույթ է: Անգուսպ հարբեցողությունը հանգեցնում է անվերջանալի պարտքերի, իսկ վճարելն անհնար է, քանզի աշխատանք չկա: Իսկական կախարդված շրջանակ է, եւ Լեւոնը մտածեց խորհրդային ժամանակաշրջանի համար անհերեւակայելի մի բան:

1980 թվականն էր: Կրեմլում իշխում էին Բրեժնեւը եւ Սուսլովը: Եվ հանկարծ ամբողջաթիրական վարչակարգով հզոր տերությունում ինչ-որ մեկը... գործադուլ է հայտարարում: Սալեխարդից Բրեժնեւին հղված ուղերձով պահանջվում էր, որ սահմանադրության համաձայն նավթահանքերում երիտասարդությանն ապահովեն աշխատանքով: Բրեժնեւը միշտ էր մնում կաթվածահար լիներ: Անմիջապես Յամալ մեկնեց պետական հանձնաժողով ԽՄԿԿ կենտկոմի քարտուղար Դոլգիխի եւ նախարարների խորհրդի փոխնախագահ Դիմշիցի գլխավորությամբ: Հանձնաժողովի կազմում էր նաեւ Վ. Չեռնոմիրդինը, որը ԽՄԿԿ կենտկոմում վերահսկում էր գազարդյունաբերությունը: Բանակցում էին գլխավորապես «Յամալգեոլոգստրոյ» տրեստի կառավարիչ Լեւոն Հայրապետյանի հետ, որը ոչ միայն ինքն էր հիմնավորապես պատասխանել հանդիմանը, այլեւ նախապատրաստել էր գործադուլավորներին: Գլխավորն այն էր, որ խղճահարության նոտաներ չինչեին, որպեսզի մոսկվացի բանագնացները հասկանային, որ երիտասարդ երկրաբանները, նավթագործները եւ որոնողները ողորմություն չեն խնդրում: Ամենից շատ ինքնադատվեց տխրահռչակ Պեսմասը, որը, ինքը ոչինչ չարտադրելով, բաշխում էր կատարում. «մոռանալով» Սիբիրի եւ Ծայր Հյուսիսի մասին:

Դժվար է պատկերացնել, թե ինչպիսի ճակատագիր կունենար Լեւոնը, եթե չլինեին Վիկտոր Չեռնոմիրդինը, որը յուրովի գնահատեց երիտասարդ գործընկերների արձագանքը, եւ Գենադի Սելեզնյովը՝ «Կոմսոմոլսկայա պրավդայի» խմբագիրը, որն անձամբ զբաղվում էր նավթագործների ու գազագործների խնդիրներին առնչվող լրագրային նյութերով: Որքան էլ սարսափելի թվա, պետական հանձնաժողովն ընդունեց սթափ եւ բերեւս մարդկային որոշում. կատարվեցին երիտասարդության բոլոր պահանջները, Լեւոն Հայրապետյանին կոչ արվեց տղաներին համոզելու վերսկսել աշխատանքը: Բայց ԽՄԿԿ կենտկոմում չմոռացան գործադուլ հրահրողին, եւ երբ մի մեծ խումբ անձինք ներկայացվեցին կառավարական պարգեւների, «պատահաբար» ցանկից դուրս մնաց Լենինի շքանշանի հավակնորդ Լեւոն Հայրապետյանի անունը:

Ես շատ էի լսել այդ պատմության եւ շիկամորուս հայի՝ Ուրենգոյի, Յամալի թե Սալեխարդի տիրոջ մասին, որը «չի խմում, չի խմում, բայց մեկ էլ տեսար, հավաքում է տղաներին, ինչ-որ առիթ ստեղծում, հատկապես, երբ հյուրեր են գալիս, եւ գինարբուք սարքում մի քանի օր շարունակ, ինչպես Պետրոս Մեծը Պոլտավայից հետո»: Երեւի տխուր ճակատագիր կունենար «Հյուսիսի դարաբաղցին», եթե Սալեխարդ չգար Խարկովի համալսարանի երկրաբանության ֆակուլտետի շրջանավարտ Թամարա Շիրկալինան: Եղեգնի պես սլացիկ, շիկահեր աղջիկը աշխատանքի ընդունվեց որպես նավթի ու գազի պատարների հաշվառման ինժեներ: Նրանք ամուսնացան: Առաջին դուստրը, Լենան, ծնվեց Խարկովում, 1981 թ., երկրորդը՝ Սալեխարդում, հինգ տարի անց: Տատի անունով նրան կոչեցին Աննա: Այդ ժամանակաշրջանը համընկավ վերակառուցման հետ, որի ալիքների մեջ հայտնվեց նաեւ Լեւոն Հայրապետյանը: 1988 թ. (դարաբաղյան շարժման հենց սկզբում) նա Մոսկվա վերադարձավ «Կոմսոմոլսկայա պրավդայի» գլխավոր խմբագիր Գենադի Սելեզնյովի հրավերով: Լեւոնի առջեւ բացվեց լայն ասպարեզ. նրա հոդվածները տպագրվում էին «Կոմսոմոլսկայա պրավդայում», «Տյումենսկի կոմսոմոլեցում», «Մոսկովսկի կոմսոմոլեցում», «Սմենայում», «Սոբեսեդնիկում»...

80-ական թթ. վերջն էր: Փոխվում էր անհատական եւ սոցիալական մտայնությունը, վերագնահատվում էին արժեքները, տաղալվում կուռքերը: Նախքան վերակառուցումը հնարավո՞ր էր պատկերացնել, թե բանվորական երիտասարդության բաժնի խմբագրի տեղակալ եւ սոցիալական հարցերի հիմնադրամի գլխավոր տնօրեն կդառնա այն երիտասարդը, որը այսպես կոչված Սուրգութի երիտասարդական շարժման ղեկավարներից մեկն էր եղել, որն ըստ էության ՀամԼԿԵՄ-ի այլընտրանքն էր: Փաստորեն, հարցականի տակ էր դրվում լենինյան կոմերիսմիության մենաշնորհությունը: Այդ փաստը, բնականաբար, բախում ստեղծեց ՀամԼԿԵՄ կենտկոմի առաջին քարտուղար Վ. Միրոնենկոյի հետ, բայց դա Լեւոնին չխանգարեց դառնալու կոմերիսմիության կենտկոմի մեկնաբան եւ զբաղվել 104 թերթերով ու հանդեսներով: Դա այն ժամանակաշրջանն էր, երբ Բորիս Ելցինը շնորհազուրկ վիճակում էր: Եվ քչերին էր հայտնի, որ հսկայական երկրի երիտասարդական թերթերում («Սովետսկայա մոլոդյոժ», «Պերմսկայա մոլոդյոժնայա գազետա», «Սոբեսեդնիկ» եւ այլն) լույս տեսնող Մոսկվայի քաղկոմի պատասխանող առաջին քարտուղարի առաջին «ընդհատակյա» հարցազրույցները կազմակերպվել էին հենց կոմերիսական մամուլի շեֆ Լեւոն Հայրապետյանի կողմից: Իհարկե, ՀամԼԿԵՄ կենտկոմում չէին կարող երկար հանդուրժել նման բացահայտ հակագորբաչովյան գործունեությունը: Փորձանքը կանխելով, Լեւոնը տեղափոխվեց «Օգոնյոկ» հանդես եւ շարունակեց գործունեություն երիտասարդական հրատարակություններ հետ:

...Լավ հիշում եմ 1989 թ. մայիսի 25-ը, երբ ծանոթացա Լեւոնի հետ: Կրեմլի Համագումարների պալատում ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների առաջին համագումարի հանդիսավոր բացումն էր: Ընդմիջման պահին ինձ մոտեցավ ամրակուռ, շիկամորուս մի երիտասարդ եւ ներկայացավ որպես «Օգոնյոկի» եւ «Սոբեսեդնիկի» հավատարմագրված լրագրող: Ես ասացի, որ հեռակա կարգով իր հետ վաղուց եմ ծանոթ, եւ մենք գրկախառնվեցինք: Կեսժամյա մեծ ընդմիջման ընթացքում Լեւոնն ինձ ծանոթացնում էր իր գաղափարներին: Իմ հայրենակիցը կես ժամում հասցրեց ոչ միայն ներկայանալ, այլեւ պատգամախոսի պես պատմել, թե ինչ է սպասում ամենքիս, ինչ կարող է պատահել ԽՍՀՄ-ին, ինչ պետք է անել Ղարաբաղի հարցում չխաբվելու համար: Նաեւ ասաց, որ ժողովրդական պատգամավորների համագումարը անպայման կխանդի ԽՍՀՄ-ը: Ուզենք թե չուզենք, տնտեսական նոր հարաբերություններ կհաստատվեն: Ուստի հայերը պետք է մտածեն նոր պայմաններում գործարարություն ծավալելու մասին, վստահորեն ասում էր զրուցակիցս եւ մտահոգություն հայտնում, թե մեր ձեռնարկատերերը կարող են ուշանալ: Այդպես էլ եղավ:

1992 թ. ամռանը Ադրբեջանում տեղաբաշխված 4-րդ բանակի մնացորդները բուրժ ազերի օմոնի հրամանատարությամբ ներխուժեցին ԼՂՀ Շահումյանի շրջան: Տանկերը եւ մարտական տեխնիկան հեռահար հրանոթների, «Գրադ» կայանքների եւ օդուժի պատշտպանությամբ շարժվեցին հարավ՝ ԼՂՀ Մարտակերտի շրջան, որի գրեթե կեսը եւս կորցրինք: Սկսվեցին Ստեփանակերտի մշտական օդային ռմբակոծումները: Եվ ինչպես եղել էր քանիցս, ղարաբաղյան ճակատի սահմանները ձգվեցին մինչեւ Մոսկվա, որտեղ 92 թ. շոգ ամռանը ականատես եղա Հայրապետյանի գործունեությանը: Կարծում եմ, հարկ չկա նշելու պետական, քաղաքական եւ ռազմական այն գործիչների անունները, որոնց հետ հանդիպեցինք Լեւոնի տանը: Ես չէի կարող ուշադրություն չդարձնել, թե Լեւոնին ինչպիսի հարգանքով էին վերաբերվում ակադեմիկոսներն ու գեներալները, երկրի հայտնի խորհրդարանականները, գրողները, արվեստագետները: Ինձ համար անվիճելի է մեկ բան. Ղարաբաղի ռազմաճակատում իրավիճակի փոփոխման ու բեկման մեջ իր դերն է խաղացել նաեւ Լեւոն Հայրապետյանը:

...Այդ ժամանակ արդեն ոչ միայն Ռուսաստանում, այլեւ ԱՄՆ-ում, Իսրայելում, Ուկրաինայում լույս տեսնող «Սոբեսեդնիկ» շաբաթաթերթի գլխավոր տնօրեն Լեւոն Հայրապետյանը դարձել էր ԱՊՀ երկրներում ամերիկյան «Ջեներալ մոթորզ» կոնցեռնի խորհրդատուն, ապա նաեւ ներկայացուցիչը: Հետագայում «Ջեներալ մոթորզին» ավելացան նաեւ «Կաստրոլլեր» եւ «Իվ Ջոնսոն» հայտնի ֆիրմաները: Համագյուղացիներից բացի քչերը գիտեն, որ զոհված բոլոր վանքցիների ընտանիքները եւ խիստ կարիքավորները նպաստ են ստանում Լ. Հայրապետյանի հիմնադրամից: Գիտակցելով, որ նպաստներն ինքնին ոչ միայն նյութական, այլեւ բարոյական հասկացություն են եւ երբեմն կարող են սոցիալական վտանգ ներկայացնել հատկապես, երբ ինքնանպատակ են դառնում, Լեւոնը ջանում է «նվիրատվությանը» հակադրել վաստակած արտադրական «շահույթը»: Քանզի նվիրատվություններին վարժված մարդը զրկվում է արժանապատվության զգացումից: Իսկ այդ զգացումից զուրկ մարդը չի կարող զինվոր լինել: Վանք գյուղում, Խաչեն գետի ափին, նախկան դարաբաղյան շարժումը գործում էր կահույքի ֆաբրիկա, որն ավերվեց արցախյան պատերազմի տարիներին: Շրջակա բոլոր բնակավայրերը ապահովվում էին Վանքի փայտյա արտադրանքներով: Հումքի հետ կապված խնդիրներ չկան: 1997 թ. ամռանը Հայաստանի նախագահությունը Վանք ժամանեցին նրա մի խումբ գործընկեր-ձեռնարկատերեր: Նրանց մեջ էր Պետերբուրգի կահույքի «Պառնաս» խոշոր կոմբինատի ժդտերես, եռանդուն գլխավոր տնօրենը՝ ծագումով գերմանացի եվգենի Դիտրիխը, որը բեւեռը ֆտելով ձեռնամուխ եղավ գործին: Հետագա երկու ամիսներին Դիտրիխը մասնագետների ողջ անձնակազմի հետ եւ նախագծային փաստաթղթերի մի ամբողջ ճամպրուկով հինգ անգամ այցելեց Վանք: Հիմա մոտ 100 ընտանիքների ճակատագրերն ուղղակի կամ անուղղակի կերպով կապված են Վանքում կառուցվող կահույքի ֆաբրիկայի հետ: Ամենից հաճախ Լեւոնը Վանք էր հասնում ուղղաթիռով: Նա ընկերացել էր օդաչուների հետ: Իմանալով, որ ուղղաթիռի զոհված օդաչուների ընտանիքներին օգնելու նպատակով մի քանի տարի առաջ ստեղծված հիմնադրամը սղաթի եւ բանկության պատճառով հազիվ է թույլ տալիս ծայրը ծայրին հասցնել, նա կազմեց մի ամբողջ ծրագիր, անվանելով «Ողջերն ու մեռածները»: Պլանները շատ-շատ են, բայց չեն հրապարակվում, մանավանդ նկատի ունենալով, որ ռոմանտիկ Լեւոն Հայրապետյանը, չնայած կյանքում կողմնակից է խիստ իրատեսության, ըստ էության սնահավատ մարդ է: Հենց այդ պատճառով նա շատ է սիրում խոսել արդեն արվածի մասին եւ բնավ չի սիրում խոսել մտահղացումների մասին: Հաճախ հերթական միտքը սկսում է Վիսոցկու «Ես չեմ սիրում» երգի հանկերգի կրկնությունից: «Ես չեմ սիրում, երբ կասկածում են, թե մարդը ստեղծված է գործողության համար», «Ես չեմ սիրում, երբ արեւը նկարում են առանց բծերի», «Ես չեմ սիրում, երբ փորձում են ինձ խաբել՝ էքի տեղ դնելով: Բավական է եւ այն, որ մեծ պատիվ եմ ունեցել ծնվել Ղարաբաղում եւ համառ լինել ղարաբաղյան էքի պես: Բայց կրկնակի էք լինել՝ երբեք»: Գանձասարում ավանդական դարձած իր այդ ուրախ բացահայտմանը Լեւոնն ավելացրեց. «Եթե Գարեգին Նժդեհը ղարաբաղյան համառությունն անվանել է արդարության զավակ, ապա բուն արդարությունը ճշմարտությունն է գործողության մեջ: Ես այդ ճշմարտության կողմն եմ»:

Ես համաձայն եմ ընկերոջս հետ:

ՅՈՒՐԻ ԲԱԼԱՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

«Ջուսիուրիյթ»-ի աշխատակից Լեյլա Թավշանջոլուն, որ Բաքու գացած էր, Յունուար 18-ի իր թերթին մէջ հրատարակած է Ադրբեջանի արտաքին նախարար Հասան Հասանովի հետ կատարուած երկարաբունչ հարցազրոյց մը, որ կարեւոր կէտեր կը բովանդակէ հայ-ադրբեջանական հակամարտութեան եւ դարաբաղեան հիմնահարցի առնչութեամբ։ Թավշանջոլուն կը նշէ, որ նախապէս երկու անգամ Հայաստան գացած էր ու տեսակցութիւններ ունեցած։ Այս կէտը դժգոհ ձգած էր Ադրբեջանը։ Լրագրական բարոյականութիւն նկատած էր երթալ նաեւ Բաքու եւ տեսակցիլ ազերի լիազօրներու հետ։ Հէյդար Ալիեւ նախ ընդունած էր տեսակցիլ, բայց ժամադրութիւն տալու համար խնդրած էր որ հիշ մը սպասէ։ Յետոյ մերժած էր։ Կը թուի թէ ան զինքը այս կերպով պատժած էր Հայաստան գացած ըլլալուն համար։ Իսկ արտաքին նախարար Հասան Հասանով ընդունած էր տեսակցիլ իրեն հետ, բայց ան ալ դիտել տուած էր, որ երբեմ պիտի չխօսէր իրեն հետ, եթէ Հայաստանէն Դարաբաղ ալ գացած ըլլար։

Թավշանջոլու հարցազրոյցը կը սկսի յիշեցնելով, որ Ալիեւ եւ Լեւոն Տեր-Պետրոսեան 1997-ին Սթրազբուրգի մէջ իրարու ձեռը սեղմեցին եւ Մինսկեան խմբակի առաջարկները ընդունելով նոր գործընթաց մը բացին։ Յետոյ ի՞նչ պատահեցաւ։

Հասան Հասանով կը պատասխանէ, որ Հայաստան ընդունեցաւ երկու փուլերով լուծման Մինսկեան առաջարկը նախ պարզել գրաւուած հողամասերը, ապա խօսիլ Դարաբաղի կարգավիճակի մասին։ Հասանով կ՚ըսէ «Հայկական ուժերու պարզած այս շրջաններուն մէջ ադրբեջանցի գաղթականները պիտի տեղաւորուին։ Իսկ Բ. փուլին հանդիպումներ, բանակցութիւններ պիտի ըլլան Դարաբաղի օրինավիճակը ճշտելու համար։ Այսինքն հոս երկու շրջան ունինք։ Պայմանը այն է, որ այդ շրջանը գրաւած հայ զինուորները ետ քաշուին։ Մինսկի խումբը այս առաջարկը բերաւ, թէ Հայաստան, թէ Ադրբեջան ընդունեցին ասիկա։ Հ. Ալիեւ եւ Լ. Տեր-Պետրոսեան ստորագրեցին փաստաթուղթը ու շատ լաւ եղաւ։ Մինսկի խումբը մեր թեզը զօրացնող պաշտօնական զեկոյց մը հրապարակեց, յետոյ Նոր տարի, Ծնունդ էր։ Կը սպասենք յետագայ զարգացումներու»։ Բայց Հայաստանի ընդդիմութիւնը ճնշում ի գործ դրաւ Լեւոն Տեր-Պետրոսեանի վրայ, ըսաւ՝ որ լուծման այս եղանակը ընդունելի չէ։ Դարաբաղի ղեկավարութիւնն ալ դէմ եղաւ։ Այն ատեն հայկական կողմը դադրեցուց բանակցութիւնները։ Կոմենհագենի մէջ Մինսկեան խմբակը հրատարակեց զեկոյց մը, որ կը զօրացնէր մեր տեսակէտները։

Դուք կը վստահի՞ք Լեւոն Տեր-Պետրոսեանի բարեացակամութեան։

Հասանով այս հարցումին կը պատասխանէ, թէ ինք կը վստահի ոչ թէ անոր բարեացակամութեան, այլ անոր դիրքին։ Գալով Դարաբաղի նախկին նախագահ, այժմ Հայաստանի վարչապետ Քոչարեանին, Հասանով չ՚արտօներ, որ Թավշանջոլու անոր մասին գործածէ «Դարաբաղի նախագահ» բացատրութիւնը, կ՚առաջարկէ գործածել միայն «Հայաստանի վարչապետ» բացատրութիւնը։ Երբ լրագրողը կը յիշեցնէ, թէ Լեւոն Տեր-Պետրոսեան հաւանաբար յուսաց, որ Քոչարեան կրնար լուծել այս խնդիրը, Հասան Հասանով չի փափաքիր մտնել քաղաքական վերլուծումներու մէջ, բայց կը զարմանայ, երբ կը լսէ, թէ ոմանք կը մտածեն քարիւղի խողովակը անցընել Հայաստանի վրայով։ Այդպիսի հարց մը ներկայիս չկայ, կ՚ըսէ ան, որեան ատեն որ Հայաստան չպարպէ ադրբեջանական հողամասերը եւ որեան ատեն որ փախստականները իրենց տեղը չվերադառնան, Ադրբեջան տնտեսական ու քաղաքական որեւէ կապ չի հաստատեր Հայաստանի հետ։

Թավշանջոլու այստեղ կ՚ուզէ գուցեեմք։ Եթէ հակամարտութիւն մը կայ, պէտք է ուրեմն խօսուի երկու կողմերուն ալ անվտանգութեան մասին։ Եվ այդպիսի անվտանգութիւն մը ապահովելու միջոցներն ալ անգտանելի չեն։ Ադրբեջան պատրաստ է այդ միջոցները քննարկելու։ Պատրաստ է խաղաղութիւն ստորագրելու, զէնքերը վար դնելու, հակակիռ հաստատելու, երկու երկիրներու միջեւ դեսպան ընդունելու եւ այլն։ Մինչդեռ դիմացի կողմը պատրաստակամութիւն ցոյց չի տար։ Անոնք կը վախնան որ Ադրբեջան ապագային շատ ուժեղ երկիր մը պիտի դառնայ։ Բայց եթէ այսպէս կը վախնան ապագայէն, ուրեմն թող վերջ տան այս օրուան թշնամութեան։

Հարցազրոյցի վերջաւորութեան Լ. Թավշանջոլու քարտէսի մը վրայ ցոյց կուտայ, որ ռուսերու կողմէ հայերու յանձնուած 32 հրթիռներ տեղակայուած են Գիւմրիի մէջ։ Հասանով կը պատասխանէ, որ Ադրբեջան այդ մասին բողոքագիր ներկայացուց Մոսկուայի։ Բայց Թուրքիա որեւէ բողոքագիր չտուաւ Մոսկուայի։ Մինչդեռ Թուրքիա պէտք չէ անտարբեր մնայ ռուսական այդ զէնքերուն դիմաց։ Պատճառն այն է, որ Թուրքիան չի ցանկար Ռուսաստանի հետ խնդիր ունենալ, ձգտեալ վիճակ ստեղծել։ Բայց ձգտեալ վիճակը կրնայ ստեղծուիլ նոյնիսկ եթէ բողոքագիր չներկայացնես։ Հայաստան կը պնդէ, որ Ադրբեջան ու Թուրքիա շրջափակում կը կիրարկեն։ Մինչդեռ սա քարտէսին վրայ բացայայտօրէն կը տեսնուի, որ Հայաստան Վրաստանի վրայով ելք ունի դէպի Սեւ ծով։ Հայաստան ելք ունի նաեւ դէպի Ռուսաստան։ Հոնկէ կրնայ գազ, էլեկտրականութիւն, ջուր ստանալ։ Հարաւէն ալ Իրանի վրայով ճամփայ ունի մինչեւ Պարսից ծոց։ Ուրեմն Հայաստան շրջափակուած չէ։ Ամբողջ աշխարհ պէտք է գիտնայ այս իրականութիւնը։ Հայաստան ամբողջ աշխարհը կը խաբէ պնդելով, որ շրջափակման մէջ կը գտնուի։

«ՅԱՌԱՋ»
28 յունվար 1998

ԹՈՒՐՔ ՍԱՄՈՒԼ

Հասանովը պնդում է՝ «Տեր-Պետրոսյանն ու Ալիեւը ստորագրել են փաստաթուղթ»

«Ջուսիուրիյթ»-ի հարցազրույցը Ադրբեջանի արտաքին գործերի նախարարի հետ

ԹՈՒՐՔԻԱ

«Մաֆիա-կառավարություն բոլոր կաղերը պետք է բացահայտվեն»

Հունվարի 30-ին «Նյու Յորք թայմս» օրաթերթը խմբագրականով անդրադարձել է նախորդ տարի Թուրքիայում կառավարություն-մաֆիա բացահայտված ալիանսի համագործակցությանը։ Ստորեւ ներկայացվում է խմբագրականի տեքստը։

«Թուրքիայի ղեկավարները սիրում են խոսել իսլամական արմատականների կամ քուրդ անջատողականների ալիանսի գործունեության մասին, սակայն վերջերս բացահայտվեց, որ Թուրքիայի ժողովրդավարությանը սպառնացող մեծագույն վտանգը գալիս է իր ղեկավարությունից։

Պատշգամբային հետախուզության արդյունքների համաձայն, բացահայտվեց 1993-96 թթ. վարչապետ Թանսու Չիլլերի կառավարության համագործակցությունը թմրաբիզնեսի, խաղատների ղեկավարության եւ ծայրահեղ աջակողմյան կազմակերպությունների հետ։ Այդ գործակցությունը հետաքրքրել է Թուրքիայի ընդդիմադիրներին ահաբեկելու եւ նույնիսկ Ադրբեջանում պետական հեղաշրջում կազմակերպելու նպատակով։

Վարչապետ Մեսութ Յըլմազը դատապարտել է այս օրինազանցումները եւ խոստացել բացահայտել Չիլլերի իշխանության օրոք արձանագրված այլ խախտումներ։ Սակայն հարցը միայն Չիլլերի իշխանության ժամանակ տեղի ունեցած ալիանսի համագործակցությունը չէ, եւ Յըլմազը չպետք է կասեցնի հետաքննությունը՝ կառավարական հաստատություններն ու պատշգամբներին պատշգամբանելու նպատակով։ «Պետությանը վնասող» հետաքննությունը կասեցնելու մասին նրա հայտարարությունները կասկածներ են արթնացնում։

Նախնական քննությունը սկսվել էր 1996 թ. վերջին տեղի ունեցած մի ավտովթարից հետո։ Սեւենայի մոտ եղել են բարձրաստիճան մի ոստիկանապետ, կառավարության համակիր քուրդ պատգամավոր եւ մաֆիայի ղեկավարը։ Վթարի հետեւանքով բացահայտվեց, որ այս անձինք ծրագրում էին իրական եւ երեւակայական քաղաքական ընդդիմադիրների ահաբեկումը։ Վերջիններիս թվում էին քուրդ հեղափոխականներ, ահաբեկիչ համարվող հայեր եւ նրանց օժանդակողներ։ Նաեւ բացահայտվեց, որ ծրագրվում էր Ադրբեջանի նախագահ Հ. Ալիեւի դեմ պետական հեղաշրջում, որպեսզի հնարավոր լիներ հեշտացնել թմրանյութերի փոխանցումը Ադրբեջանին։

Քննիչների հետաքրքրության կենտրոնում մինչ այժմ եղել է միայն Չիլլերի իշխանության ժամանակաշրջանը, սակայն բացահայտվել է, որ համագործակցությունը սկսվել է առնվազն 1980-ական թվականների սկզբից՝ ռազմական հեղաշրջումից հետո։ Այս կաղերը պետք է մանրամասնորեն բացահայտվեն՝ ներառյալ այն ժամանակաշրջանը, երբ վարչապետ էր Յըլմազը (1990 թ.)։ Հավելյալ քննություններն անհրաժեշտ են բացահայտելու համար քրդական շրջաններում կատարված կասկածելի սպանությունները։ Կառավարության եւ մաֆիայի համագործակցությունը պետք է բացահայտվի ամբողջությամբ եւ արմատախիլ լինի, որպեսզի չկրկնվի»։

«ԵՐԵՎԱՆ» ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Արաբները Մոնիկա Լեւինսկուն համարում են Իսրայելի գործակալ

Նախագահ Բիլ Քլինթոնի հետ կապված վերջին սեռ-սկանդալը ի՞նչ հետեւանքներ կունենա Մերձավոր Արեւելքում։ Նախագահ մնալու դեպքում նա կկարողանա՞ արդյոք իսրայելցիներին համոզել շարունակելու խաղաղության գործընթացը։ Մոնիկա Լեւինսկու գործը որքանո՞վ է բարդացնում Վաշինգտոնի եւ Բաղդադի հակամարտությունը։ Այս բոլոր հարցերը հուզում են ինչպես իսրայելցիներին, այնպես էլ արաբներին։

Սկանդալը ծագեց այն ժամանակ, երբ Քլինթոնը նոր էր ընդունել Իսրայելի վարչապետ Նաթանյահուին եւ նրանից պահանջել էր Օսլոյի համաձայնագրերին հետեւելով՝ զորքերն «զգալիորեն» հետ քաշել Այսրհորդանանից։ Քլինթոնը հունվարի 22-ին ընդունեց նաեւ ՊԱԿ-ի ղեկավար Յասեր Արաֆաթին։ Բայց այսօր վերջինիս մերձավոր խորհրդականները չեն բացցնում իրենց հոռետեսությունը։ Նրանք բազմաթիվ մեկնաբանների նման համոզված են, որ Մոնիկա Լեւինսկու սկանդալից թուլացած Քլինթոնը այլեւս չի կարողանա բավարար ճնշում գործադրել Իսրայելի վրա։

Արաբական մամուլի մի մասը էլ ավելի հեռուն է գնում «սիոնիստական լոբբիին» մեղադրելով, որ նա սկանդալը սարքել է հատկապես տարածային զիջումների հարցում Իսրայելի վրա ԱՄՆ-ի ճնշումը թուլացնելու նպատակով։ Հորդանանի մայրաքաղաք Ամմանում թերթերի մեծ մասն ենթադրում է, որ Մոնիկա Լեւինսկին հրեական համայնքի անդամ է։ «Էլ արաբ էլ յոմ» օրաթերթը նույնիսկ գրեց. «Ամերիկան գլուխը խոնարհում է Նաթանյահուի կառավարության առջեւ»։ Եգիպտոսի թերթերը եւս գրեթե ամեն օր անդրադառնում են այս պատմությանը։ Երկրի երկու գլխավոր շաբաթաթերթերը՝ «Ռոզ էլ Յուսեֆը» եւ «Ալ օսբոան» գրում են դավադրության մասին։ Առաջինը մասնավորապես նշում է. «Ծայրահեղ աջ կուսակցությունները ահաբեկման են դիմում, որպեսզի ԱՄՆ նախագահը հրաժարվի Նաթանյահուի վրա ճնշում գործադրելուց»։ Երկրորդը, «դիվանագիտական աղբյուրներ» վկայակոչելով գրում է, թե «սիոնիստական քաղաքական կազմակերպությունների ղեկավարները Քլինթոնին սպառնացել են ամբողջ աշխարհում նրա դեմ արշավ ծավալել, եթե նա վերջ չդնի Նաթանյահուի վրա գործադրվող ճնշումներին»։

Այս վարկածը պատշգամբում են Սիրիայի «Սիրիա թայմս» պատշգամբերթը եւ Արաբական Միացյալ Էմիրությունների բազմաթիվ օրաթերթեր։ Մասնավորապես «Ալ իթթիհադը» գրում է, թե «ԱՄՆ-ի նախագահը սիոնիստական լոբբիի պատժիչ արշավի զոհն է»։

Քաղաքական գործիչների մեջ այս մեկնաբանությունն ամենից շատ պատշգամբանում է Լիբանանի վարչապետ Ռաֆիկ Հարիրին, պնդելով, թե խոսքը «ոչ թե սեռական սկանդալի», այլ «սիոնիստական լոբբիի ձեռնարկման մասին է, որը ոլորում է աշխարհի ամենահզոր նախագահի ձեռքերը»։ «Էխտրես» հանդեսի տեղեկությունների համաձայն, պատեսդինյան հանձնաժողովի նախագահ Բիլ Քլինթոնի հետ կապված վերջին սեռ-սկանդալը ի՞նչ հետեւանքներ կունենա Մերձավոր Արեւելքում։ Նախագահ մնալու դեպքում նա կկարողանա՞ արդյոք իսրայելցիներին համոզել շարունակելու խաղաղության գործընթացը։ Մոնիկա Լեւինսկու գործը որքանո՞վ է բարդացնում Վաշինգտոնի եւ Բաղդադի հակամարտությունը։ Այս բոլոր հարցերը հուզում են ինչպես իսրայելցիներին, այնպես էլ արաբներին։

Նաթանյահուի հետ հանդիպումից հետո Բիլ Քլինթոնը հայտարարեց, թե «այս սկանդալը, անշուշտ, սիոնիստական լոբբիի ձեռքի գործն է»։

Իսրայելում խաղաղության կողմնակիցները մտահոգված են, մինչդեռ վարչապետ Նաթանյահուի բարեկամները ուրախությամբ ձեռքերն են շփում։ Որոշ ծայրահեղ կրոնավորներ Մոնիկա Լեւինսկուն նույնիսկ համեմատում են Քսերխես արքայի կնոջ՝ Եսթերի հետ, որը, ըստ Աստվածաշնչի, Պարսկաստանի հրեաներին փրկել էր աստվածային նախախնամության շնորհիվ։

Արաբական որոշ թերթեր մտահոգություն են հայտնում նաեւ Իրաքի առնչությամբ։ Քաթարի «Ալ Ռայա» թերթը գրում է. «Նախագահ Քլինթոնը կարող է արագորեն հարված հասցնել Իրաքին, որպեսզի իր այդ սեռական սկանդալները եւ ամերիկացիների ուշադրությունը Մոնիկա Լեւինսկուց շեղելով բեւեռի Սադդամ Հուսեյնի վրա»։ Սակայն մեկնաբաններից շատերն այն կարծիքին են, որ թեեւ ԱՄՆ-ում բռնկած սկանդալը կարող է ամերիկացի դիվանագետներին կաշկանդել իսրայելա-արաբական հակամարտության հարցում, բայց Իրաքի խնդրում դրա հետեւանքներն ավելի դժվար է կանխատեսել։

Պատրաստեց
ՊԵՏՐՈՍ ՔԵՇԻՇՅԱՆԸ

Ինչպիսի՞ի կլինի Ավստրալիան հաջորդ հազարամյակում

ՍԻԴՆԵՅ, 3 ՓԵՏՐՎԱՐ ՍՐՄԵՆՊՐԵՍ։ Ավստրալիան կարող է խզել սահմանադրական կապերը Մեծ Բրիտանիայի հետ եւ իրեն հանրապետություն հռչակել, եթե դա ցանկանան ավստրալացիները, Կանբերայում հայտարարել է վարչապետ Ջոն Հովարդը։ Մինչ այդ երկրի մայրաքաղաքում բացվել է երկաբաթյա նիստ, որը կոչված է լուծելու այն հարցը, թե ինչպիսին է լինելու Ավստրալիայի պետական կառուցվածքը հաջորդ հազարամյակի սկզբին։

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Գույների հրավառությունը՝ կյանքի խնամս

5 տարի առաջ էր: Չմեռային մի գրասենյակ or Աբովյան քաղաքի ռադիոն հայտարարեց, որ այստեղ է ժամանել Իրանի դեսպանը եւ իր անց երաժշտական դպրոցի դասիճում կկայանա հանդիպում աբովյանցիների հետ: Գնացի եւ չափսոսացի: Դպրոցի ընդարձակ նախասրահում իմ առջեւ բացվեց տաք գույների մի հրաշք աշխարհ: Հրաշալի, ինքնատիպ նկարներ էին եւ անծանոթ մի անուն՝ Հիլդա: Ինձ ներկայացրին նկարչուհուն: Բազմոցից դժվարությամբ բարձրացավ գեղեցիկ, արտահայտիչ դեմքով, խելացի աչքերով մի աղջիկ: Մեր կարճատեւ զրույցից պարզվեց, որ նա պարսկահայ է, հայրենիք է եկել 1971 թ., ինքնուս նկարչուհի է, մի քանի անգամ ցուցադրվել է Աբովյանում: Նույն պահին իր շախմբով մեզ մոտեցավ պրն դեսպանը, ժպտադեմ բարեւեց նկարչուհուն, գրառումներ կատարեց նրա հուշամատյանում, ինչ-որ բաներ ասաց պարսկերեն եւ մտավ դահլիճ: Հետագայում մենք հանդիպեցինք, եւ ես իմացա, որ դեսպանը մեկ տարի առաջ նույնպես եղել է Հիլդայի ցուցահանդեսում, շատ է հավանել նրա նկարները եւ մի նկար էլ նվեր ստացել Հիլդայից:

...երբ մոտիկից ծանոթացա Հիլդա Շիրինյանի բազմաբնույթ աշխատանքներին, լսեցի նրա մեկնաբանությունները, համոզվեցի, որ այդ աստվածատուր ձիրքը նա ժառանգել է իր արծաթագործ հորից եւ բազմատաղանդ մորից՝ տկն Նախշունից: Ահա ինչ է պատմում այդ մասին Հիլդան.

– Այլ եմ բացել արհեստավորների ընտանիքում: Գորգագործ մորս գունային զգացողությունը եւ արծաթագործ հորս խոհափիլիսոփայական գաղափարները ներգործություն են ունեցել իմ արվեստի վրա:

Իսկ արծաթագործ Շիրինյան եղբայրները մեծ ճանաչում ունեին Թավրիզում:

Ես շատ նկարիչների մասին եմ գրել, բայց պետք է խոստովանեմ, որ ինձ համար ամենադժվարը եղել է Հիլդայի մասին գրելը: Նա միշտ դժգոհ է ինքն իրենից, նրան շատ բնորոշ է մի ցանկություն՝ գտնել կյանքի անկրկնելի պահը եւ այն հավերժացնել: Բայց կա մի թեմա, որին նա վերադառնում է միշտ եւ թերեւս դեռ կվերադառնա: Այն կոչվում է «Հույս, հավատ եւ սեր»: Այս թեմային առնչվող նրա կոմպոզիցիոն շատ կտավները («Գարուն», «Ծնունդ», «Մկրտություն», «Հարություն», «Կյանք», «Դրախտ»...), բազում դիմանկարները եւ նատյուրմորտները հարուստ ներաշխարհի եւ խորաթափանցության վկայություն են:

Հիլդայի ստեղծագործական անհատականության ձեւավորման վրա մեծ հետք են թողել իտալական վերածնդի դարաշրջանի նկարիչները, հայերից՝ Արշիլ Գորկին, Մինաս Ավետիսյանը, Գառզուն, Փարաջանովը: Իսկ հունական դիցաբանությունը մանրամասն ուսումնասիրելուց հետո, վերջին տարիներին նկարչուհին սկսել է ստեղծել նաեւ դիցաբանական նոր կերպարներ: Հիլդան հավատարիմ է սիրում է անդրադառնալ հայ պատմավիպասանությանը եւ հրապուրված է մանրանկարչությամբ: Նույն թեմաներով նա ստեղծել է մանրաքանդակների մի հարուստ շարք: Չբացառելով ծանոթությունը եւ շփումը եվրոպական արվեստների հետ՝ նկարչուհին կարեւորում է ազգային մշակութային ու ազգային արվեստ ստեղծելու գաղափարը:

Նրա նկարները օծված են զարմանահրաշ հաստությամբ՝ բացահայտել հիմնական, երբեմն իրեն անգամ անծանոթ, կամ փոքր ծանոթ հատկանիշներով մի աշխարհ: Հաճույք քնքշությամբ եւ սիրով է նա նկարում երեխաներին: Այդ դիմանկարների մոտով ուզում ես այնպես անցնել, որպեսզի չխանգարես աղոթող երեխային եւ չարթնացնես քնածին:

Հիլդային կարելի է անվանել նաեւ բնության նկարիչ՝ բնության ստեղծածի օգնությամբ: Մարդու սրտին հոգեհարազատ այս իմաստաբանա-բնանկարները կատարվում են հիմնականում հատկերի, չորացած տերեւների, ծաղիկների *հմուտ համադրումով: Նա ինքն էլ չգիտի, ինչպես անվանի իր աշխատանքները, բայց զգում է, որ շատ են հետաքրքրվողները եւ հետեւողները: Բոլորին մի խորհուրդ է տալիս. աշխատեք, որ ձեր օգտագործվող նյութը համապատասխանի թեմային:

Հիլդա Շիրինյանը պատկանում է մեր սակավաթիվ այն արվեստագետների թվին, որոնք (հատկապես վերջին տարիներին) ապրելով կենցաղային շատ համեստ պայմաններում (նվազագույն թոշակ), իրենց ստեղծած գործերը ոչ թե վաճառում են, այլ նվիրում՝ հերքելով գերմանական այն ասացվածքը, որ «արվեստը գնում է հացի հետեւից»: Գուցե դա է պատճառը, որ բյուրեղյա մաքրություն եւ հպարտ բնավորություն ունեցող այդ աղջիկը մինչեւ այժմ էլ միջոցներ եւ հնարավորություններ չի ունեցել իր աշխատանքները ցուցադրելու եւ անհատական ցուցահանդես բացելու մայրաքաղաքում եւ իր ծննդավայր Թավրիզում:

Անցյալ ամռանը Հիլդայի բոլոր աշխատանքները՝ ցուցադրվեցին հրազդանում եւ ապա երեւանում, արժանանալով մեծ ուշադրության, իսկ Հիլդային շնորհեցին Հայաստանի հաշմանդամների փառատոնի դիպլոմ եւ մրցանակներ:

Հիլդայի ստեղծագործական երեւակայությունը սահմաններ չի ճանաչում: Նրա աշխատանքները կյանքի շնչառությունն են եւ գույների հրավառություն: Նրան պետք են աշխատելու պայմաններ եւ արվեստանոց: Իսկ այս հարցում, համոզված եմ, նրան անպայման կօգնի Աբովյանի քաղաքապետարանը:

ՄԵԼՍԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՈԲԵԼՅԱՆՆԵՐ

Փետրվարյան հիշարժան օրացույց

Հովհաննես Շավարշ (1.2.1908-17.6.1980)-նկարիչ, 90-ամյակը:

Բորիս Պիոտրովսկի (4.2.1908-1990)-հնագետ, արեւելագետ, պատմաբան, 90-ամյակ:

Զաքել Եսայան (4.2.1878-1941)-գրող, թարգմանիչ, հրապարակագիր, 120-ամյակը:

Արշալույս Սարոյան (4.2.1923-25.11.1974)-բանաստեղծ, լրագրող, 75-ամյակը:

Լիպարիտ Սարգսյան (5.2.1938)-բանաստեղծ, արձակագիր; թարգմանիչ, 60-ամյակ:

Ժյուլ Վեռն (8.2.1828-1905)-ֆրանսիացի գրող, 170-ամյակը:

Երվանդ Կողբեսյանց (9.2.1888-1976)-մաթեմատիկոս, երկրաֆիզիկոս, գյուտարար, 110-ամյակը:

Բերտոլտ Բրեխտ (10.2.1898-1956)-գերմանացի բանաստեղծ, դրամատուրգ, գյուտարար, 100-ամյակը:

Անտոն Գարագաշյան (11.2.1818-19.11.1903)-հայ ճարտարապետության հիմնադիր, փիլիսոփա, տրամաբան, լեզվաբան, 180-ամյակը:

Արփիար Արփիարյան (1851-12.2.1908)-գրող, մահվան 90-ամյակը:

Ֆյոդոր Շալյապին (13.2.1873-12.4.1938)-ռուս երգիչ, 125-ամյակը:

Նիկոլայ Կոպեռնիկոս (19.2.1473-24.5.1543)-լեհ աստղագետ, աշխարհի արեւակենտրոն համակարգի ստեղծողը, 525-ամյակը:

Գեւորգ Արշակյան (20.2.1928)-գրող, դրամատուրգ, 70-ամյակը:

Ռուսական զորքի կողմից Հայաստանի ազատագրումը պարսկական տիրապետությունից (22.2.1828)-170-ամյակը:

Ֆրունզե Ելանյան (22.2.1928)-բալետի արտիստ, 70-ամյակը:

Վաղինակ Գրիգորյան (22.2.1923-13.2.1984)-բժիշկ, ֆիզիոլոգ, 75-ամյակը:

Էդուարդ Սարգսյան (25.2.1918-9.6.1984)-ճարտարապետ, 80-ամյակը:

Հրանտ Հրաիան (28.2.1898-16.4.1988)-արձակագիր, դրամատուրգ, թարգմանիչ, 100-ամյակը:

Թորոս Թորանյան (29.2.1928)-գրող, հրապարակախոս, բժիշկ, հասարակական գործիչ, 70-ամյակը:

«Անահիտ» ազգային, գրական-գեղարվեստական հանդես (Փարիզ, 1898), 100-ամյակը:

Հակոբ Դ. Ջուղայեցի (1598- 1.8.1680)-հայ կաթողիկոս 1655-ից, 400-ամյակը:

Հ. Հ.

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

1997 թ. Երեւանի «Տարվա լավագույն ճարտարապետական կառույց» մրցույթի հաղթողների թվում է «Էդելվեյս» առեւտրի տունը (հասցեն Սայաթ Նովա եւ Տերյան փողոցների հատման անկյունում): Հեղինակ Հայկազ Քոչար:

ԱՍՏՂԵՐԻ ԿՅԱՆՔԻՑ

Բարիշնիկով.՝«Քեմի վրա հուզվում եմ առաջվա պես»

Ռուդոլֆ Նուրեեւի մահից հետո Միխայիլ Բարիշնիկովը դիտվում է ժամանակակից ռուս խոշորագույն մենապարողը: Հռչակված լինելով որպես դասական բալետի աստղ, նա առանց վարանելու տեղափոխվեց ժամանակակից պարերի ոլորտ: 49-ամյա Բարիշնիկովն այսօր պարում է Խոսե Լայմոնի, Մարկ Մորիսի, Դանա Ռեդսի, Բրեդ Պիտերսոնի, Մարիս Լիբերտի եւ մյուս մեծ վարպետների բալետներում: Բարիշնիկովն ավարտել է Լենինգրադի Վագանովայի անվան բալետային դպրոցը եւ 21 տարեկանում դարձել Կիրովի անվան թատրոնի մենապարող: Նուրեեւի պես տեղափոխվել է Արեւմուտք, 1979 թվականից աշխատել Նյու Յորքի «Սիթի բալետում» եւ 10 տարի ղեկավարել Ամերիկյան բալետային թատրոնը: 1990 թ. հրաժարվել է դասական խաղացանկից եւ հիմնել իր պարախումբը՝ «Ուայթ օուք դանս փրոջեկտը», ներկայացնելով ամերիկյան ժամանակակից հեղինակների գործեր: Բարիշնիկովը նաեւ նկարահանվել է «Կյանքի շրջադարձ», «Գիշերային արեւ», «Պարողները» ֆիլմերում եւ խաղացել Կաֆկայի «Փոխակերպություն» թատերական բեմադրության մեջ: Վերջերս նա ելույթներով հանդես եկավ Փարիզի «Բոբինյի» հայտնի համերգասրահում: Արդեն ծանուցներ են տեսնվում, թե Բարիշնիկովը նշանակվելու է Փարիզի օպերայի գեղարվեստական ղեկավար:

Հյուրախաղերի առթիվ «Պարի մաս՛չ» հանդեսի թղթակիցը հարցազրույց ունեցավ հռչակավոր մենապարողի հետ:

– Դասական խաղացանկը ձեզ այլեւս չի՞ հետաքրքրում:

– Ես հազվադեպ եմ դիտում դասական բալետներ: Մեծ մասամբ երեխաներիս եմ տանում դիտելու «Քնած գեղուհին» կամ «Շչելկունչիկը»: Թեեւ կարծում եմ, որ նրանք ավելի հետաքրքրվում են դասական պարերի հանդեպ: 19-րդ դարի խաղացանկն ինձ ձանձրացնում է: Բացի դրանից, հազվադեպ են ստեղծվում այնպիսի բեմադրություններ, որոնցում միաժամանակ լինեին թե մեծ պարողներ, ընտիր նվագախումբ եւ թե լավ բեմահարդարանք: Իմ կարիերայի ընթացքում ես միշտ եմ ձգտել մոդել էի հիշում կատարյալ երեկոներ:

– Չե՞ք վախենում արդյոք, որ կմեղադրվեք ձեր պաշտածն այրելու համար:

– Կարող եմ ասել, որ պարել եմ բազմաթիվ միջակ բեմադրություններում, ներառյալ նաեւ իմ բեմադրությունները: Բայց միայն ես չեմ այս վինակում. պարողների 80 տոկոսը չի սիրում այն բեմադրությունները, որտեղ ինքը հանդես է գալիս:

– Ձեզ ի՞նչ է տալիս ձեր ստեղծած «Ուայթ օուք դանս փրոջեկտը»:

– Ժամանակակից բալետի մեծ պարուսույցներն ավելի շատ են, քան դասական բալետինը: Պատճառը թերեւս այն է, որ առաջինները ենթակա չեն ավանդական բալետային խմբի ճնշմանը, որտեղ հարկավոր է աշխատել նույն կազմի հետ, շահութաբեր լինել եւ ներքին իշխանության կոիվներ մղել: Բացի դրանից, մենապարող աստղերին «ղեկավարելը» դյուրին չէ: Իմ պարախմբում ես այլեւս աստղ չեմ: Մյուսների նման պարող եմ, թեեւ ղեկավարում եմ խումբը: Գիտեմ նաեւ, որ հանդիսականներն ավելի շատ են լինում իմ անվան շնորհիվ: Պարախմբի լավ ֆինանսավորման նպատակով ստիպված եմ լինում ավելի հաճախ հանդես գալ որպես մենապարող:

– Ներկայացրեք խնդրեմ ձեր պարախումբը:

– Ես Բրյուսելի թագավորական թատրոնի պարուսույց Մարկ Մորիսի հետ որոշել էի փորձարարական պարախումբ ստեղծել: Փորձն արժանացավ հանրության եւ հնարավորների դրվատանքին, եւ մենք շարունակեցինք գործը: Դիմեցինք հայտնի պարուսույցներ Մարթա Գրեհեմին, Լարս Լուբովիչին եւ Փոլ Թեյլորին: Իմ պարախմբի յուրօրինակությունը այդ պարուսույցների տարբեր ոճերի միախառնման արդյունքն է:

– Ինչո՞ւ խումբը հիմնեցիք ԱՄՆ-ում, որտեղ չկա պետական ֆինանսավորում:

– Այո, մենք գործում ենք ինքնաֆինանսավորմամբ: Մեր եկամուտները ստացվում են տոմսերի վաճառքից: Երբեմն ստիպված եմ լինում իմ գրպանից դնել: Վաճառում ենք իմ անունը կրող պարի հագուստներ: Վաճառքը հաջող է ընթանում: Մենք Նյու Յորքում գրասենյակ չունենք: Այդ խնայողության շնորհիվ կարողանում ենք շրջագայությունների ժամանակ ունենալ ոչ միայն ձայնագրություններ, այլեւ երաժիշտներ: Պարողները գալիս են ու գնում. նրանք պարում են նաեւ այլ պարախմբերում: Ես նրանց հարցնում եմ, թե որքան ժամանակ կարող են մնալ: Քննարկում ենք նաեւ այն հարցը, թե որ պարուսույցների հետ կուզենայինք աշխատել: Պարողները հաճախ խորհուրդներ են տալիս:

– Ինչպիսի՞ն է ձեր խաղացանկը:

– Մենք պահպանում ենք մի քանի հանրահայտ բեմադրություն, որոնք հայտնի պարուսույցների «ժամանակակից դասական» գործեր են: Պատճառն այն է, որ պարողների համար օգտակար է մեր ժամանակների դասական գործերի կատարումը: Դա նաեւ մեր հանդիսականներին «կրթելու» մի ձեւ է: Նրանք թերեւս գալիս են դիտելու դասական գործեր, բայց որոշ պատկերացում են կազմում այսօրվա բալետային իրադարձությունների մասին:

– Պարելն արդյո՞ք ձեզ նույնքան հաճույք է պատճառում, որքան նախկինում:

– Բեմի վրա ես դարձյալ հուզվում եմ առաջվա պես: Իհարկե, չեմ թաքցնում, որ պարելն ինձ համար հետզհետե ավելի դժվար է դառնում:

Պատրաստեց
Պ. ՔԵՇԻՇՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մարզական

ԵՐԵՎԱՆ

Հայաստանի թեթևատլետների ձմեռային ստուգատեսը

«Հայաստան» մարզական միության թեթևատլետիկական սրահում անցկացվեց ձմեռային մրցաշրջանի կարևորագույն ստուգատեսը՝ Հայաստանի անհատական-թիմային առաջնությունը:

Երկու օր տևած մրցումներին մասնակցեցին Երևանի, ինչպես նաև հանրապետության մարզերի, Լեռնային Ղարաբաղի 140 մարզիկ-մարզուհիներ: Ուրախալի է, որ առաջնությունն անցավ ակտիվ պայքարում, այն մեծ հետաքրքրություն էր առաջացրել, ներկա էին բազմաթիվ հանդիսականներ:

Թիմային պայքարն ընթացավ Երևանի եւ Լոռու մարզիկների միջև: Նշենք, որ հանրապետությունում միայն մայրաքաղաքում եւ Վանաձորում կան համապատասխան դահլիճներ մարզածեւի նորմալ պարապմունքներ անցկացնելու համար: Ի վերջո մի փոքր առավելությամբ հաղթող դարձավ մայրաքաղաքի թիմը՝ 11192 միավոր: Լոռու մարզի թեթևատլետները երկրորդն են՝ 10131 միավոր: Իսկ երրորդ տեղում են Սյունիքի ներկայացուցիչները (5535), որոնք առաջ անցան չորրորդ տեղը գրաված արարատցիներից: Հաջորդ տեղերում են Լեռնային Ղարաբաղի, Կոտայքի, Արմավիրի մարզիկները:

Առաջնությունում ավանդաբար բարձր արդյունքներ ցույց տվեցին մեր ցատկորդները: Հեռացատկի մրցումներում թեժ պայքար ընթացավ Մերուժան Սարգսյանի (Լոռի) եւ Վաչիկ Սահակյանի (Արարատ) միջև: Երկու մարզիկներն էլ ցույց տվեցին վարպետության թեկնածուի արդյունք: Չեմպիոն դարձավ Սարգսյանը, որը ցույց տվեց 7 մ 35 սմ արդյունք: Նրանից 13 սմ-ով հետ մնաց Սահակյանը:

Վատ չէ նաեւ եռացատկում Սյունիքի ներկայացուցիչ Էդիկ Նուրիջանյանի արդյունքը՝ 14 մ 40 սմ:

Կանանց 50 մ արագավազքում հաղթեց արարատցի Ինեսա Գրիգորյանը: Տղամարդկանց նույն մրցածեւում բոլոր երեք մրցանակակիրները Արարատի մարզի ներկայացուցիչներն էին, իսկ չեմպիոն դարձավ Շահեն Սարգսյանը:

Հետաքրքիր է, որ 800 մ վազքարածությունում կանանցից հաղթեց Քրիստինե Միկոյանը, տղամարդկանցից՝ Ռոբերտ Միկոյանը: Նրանց մարզիչն է իրենց հայրը՝ նախկինում հայտնի վազորդ Արտաշես Միկոյանը:

Ինչպես մրցումներից հետո զրույցի ժամանակ նշեց գլխավոր քարտուղար Յուրի Կուրպալյանը, մեր թեթևատլետները հուսադրող արդյունքներ ցույց տվեցին եւ կարելի է դաջող ելույթներ ակնկալել մրցաշրջանի ընթացքում:

ՆԱԳԱՆՈ-98

Օլիմպիադայի սպասումով

Ձմեռային 18-րդ օլիմպիական խաղերի կազմակերպիչներին երկու կարեւոր հարց է հուզում՝ ձյան պակասը եւ ճանապարհների խցանումները:

Առաջին հարցը կարծես լուծվել է. եթե հարթավայրում ձյուն չկա, ապա սարերում, որտեղ կանցկացվեն դահուկային ու լեռնադահուկային մրցումները, առաս տեղումներից հետո ձյան հաստ շերտ է նստած: Եվ այդ ձյունը մաքրելու, մրցաստարածությունը կարգի բերելու համար կազմակերպիչները դիմել են բանակայիններ օգնությանը: Այդ աշխատանքներում ընդգրկված են 1700 զինվորներ:

Շատ ավելի անհանգստացնող է ճանապարհների խցանման հարցը: Բանն այն է, որ լեռնային նեղ ճանապարհներ ունեցող Նագանոյի ոլորտներում մեծ թվով՝ 1600 ավտոմեքենա է գրանցված: Օլիմպիադայի կազմակերպիչները բնակիչներին կոչ են անում գիտակցություն դրսեւորել, օգտվել ավտոբուսներից: Արդեն իսկ որոշ արդյունքի հասել են. ավտոմեքենաներից օգտվողների թիվը որոշ չափով կրճատվել է:

Տեղի հյուրանոցներից մեկում սկսվել է ՄՕԿ-ի գործադիր կոմիտեի եռօրյա նիստը: Նագանոյի օլիմպիադայի կազմկոմիտեն հաղորդություն է ներկայացնում կատարված աշխատանքների մասին: Կննարկվեն նաեւ օլիմպիադայի մասնակիցների, բազմաթիվ հյուրերի՝ տրանսպորտով տեղափոխման, մարզիկների բժշկական վերահսկողության, մրցումների անցկացման հետ կապված տարբեր հարցեր:

ՇԱԽՄԱՏ

Հաղթողները երկուսն են

Ավարտվեց հոլանդական Վեյկ ան Զեե փոքրիկ բնակավայրում անցկացված հոբելյանական մրցաշարը, որը ՖԻՊԵ-ի դասակարգմամբ՝ շատ բարձր՝ 17-րդ կարգ ուներ: «Հոոգովենս» հայտնի ֆիրմայի հովանավորությամբ անցկացվող մրցաշարը հոբելյանական էր, թվով 60-րդը: Այն սովորականի նման շատ ուժեղ կազմ ուներ, բոլոր տասնչորս մասնակիցները գրոսմայստերներ էին, նրանց թվում էին ՖԻՊԵ-ի գծով աշխարհի չեմպիոն Անատոլի Կարպովը, փոխչեմպիոն Վիշվանաթան Անանդը, աշխարհում երկրորդ անհատական գործակից ունեցող Վլադիմիր Կրամնիկը...

Վերջինս էլ մրցաշարի սկզբում վստահորեն գլխավորեց աղյուսակը: Առաջին 4 հանդիպումներում Կրամնիկը նույնքան միավոր ուներ: Սակայն միջնամասում նա խիստ անհաջող խաղաց՝ 2 պարտիա տանուլ տվեց, իսկ 4-ն ավարտեց ոչ-ոքի: Այնուհետեւ երիտասարդ շախմատիստը վերջին 3 պարտիաներում վաստակեց 2,5 միավոր: Մրցումների միջնամասում հաջող խաղաց Անանդը, սակայն նա էլ խաղաղությամբ ավարտեց իր վերջին հանդիպումները: Ի վերջո այս նախկին չեմպիոնները բաժանեցին առաջին-երկրորդ տեղերը:

Անհաջող խաղաց Կարպովը: Առաջին վեց տուրերի ոչ-ոքիներից հետո նա 7-րդ եւ 9-րդ տուրերում պարտություններ կրեց, եւ միայն վերջնագծի մոտ տարած երկու հաղթանակները աշխարհի չեմպիոնին հնարավորություն տվեցին 50 տոկոսանոց արդյունքով ավարտել մրցաշարը:

Վեյկ ան Զեեի մրցաշարն անցավ բավականին արդյունավետ պայքարում: մեծ էր կողմերից մեկի օգտին ավարտված պարտիաների թիվը, բոլոր մասնակիցները ճաշակեցին պարտության դառնությունը:

Վերջում ներկայացնենք մրցաշարի տեխնիկական արդյունքները. 1-2. Վլադիմիր Կրամնիկ (Ռուսաստան) եւ Վիշվանաթան Անանդ (Հնդկաստան)՝ 13 հնարավորից 8,5-ական միավոր, 3-5. Ալեխեյ Շիրով (Իսպանիա), Յան Թիման (Հոլանդիա), Մայկլ Ադամս (Անգլիա)՝ 7-ական, 6-10. Անատոլի Կարպով (Ռուսաստան), Հուդիթ Պոլգար (Հունգարիա), Բորիս Գելֆանդ (Բելառուս), Երուն Պիկես (Հոլանդիա), Վասելին Թոփալով (Բուլղարիա)՝ 6,5-ական, 11. Վալերի Սալով (Ռուսաստան)՝ 5,5, 12. Ֆրիտս Նիբոեր (Հոլանդիա)՝ 5, 13. Լյուկաս Վան դեր Սբերեն (Հոլանդիա)՝ 4,5 14. Պաուլ վան դեր Սբերեն (Հոլանդիա)՝ 4 միավոր:

ԹԵՆԻՍ

Հաղթեցին Հինգիսն ու Կորդան

Ավստրալիայի բաց առաջնությունը

Մելբուռնում ավարտվեց Ավստրալիայի բաց առաջնությունը, որը թենիսի ամենահեղինակավոր շարքի «Մեծ սաղավարտի» չորս մրցաշարերից առաջինն էր:

Կրկին փայլուն հաջողության հասավ 17-ամյա շվեյցարուհի Մարտինա Հինգիսը: Մեկուկես ժամ տեւած եզրափակիչ խաղում 6-3, 6-3 հաշվով հաղթելով Կոնչիտա Մարտինեսին, նա երկրորդ տարին անընդմեջ նվաճեց Ավստրալիայի բաց առաջնության հաղթողի կոչումը՝ միաժամանակ վաստակելով նաեւ 383 հազար դոլար: Ասենք, որ պատանի թենիսիստուհին հաղթում է «Մեծ սաղավարտի» վերջին 5 մրցաշարերից չորսում (Հինգիսը տանուլ էր տվել միայն անցյալ տարվա Ֆրանսիայի բաց առաջնությունում, խորվաթուհի Իվա Մայոլիին): Այս առաջնությունում Մարտինան մեկ անգամ եւս կանգնեց պատվո պատվանդանի առաջին աստիճանին. նա եւ 15-ամյա Միրյանա Լուչիչը (Խորվաթիա) կանանց զուգախաղերի եզրափակիչում 6-4, 2-6, 6-3 հաշվով պարտության մատնեցին փորձառու թենիսիստուհիներ Նատալյա Զվերեւային (Բելառուս) եւ Լինդսեյ Դեւենպորտին (ԱՄՆ):

Մելբուռնում իր մարզական կարիերայի ամենախոշոր նվաճմանը հասավ Պետր Կորդան (Չեխիա): Նա առաջին անգամ հաղթեց «Մեծ սաղավարտի» մրցաշարում (առաջին փորձը՝ 1989-ին, ավարտվել է անհաջողությամբ. Ֆրանսիայի բաց առաջնության եզրափակիչում նա պարտություն է կրել ամերիկացի Ջիմ Կուրյեից): 30-ամյա թենիսիստը վճռական խաղում առավելության հասավ երիտասարդ չիլիացի Մարչելո Ռիոսի նկատմամբ. հաշիվն է 6-2, 6-2, 6-2: Կորդան վաստակեց 412 հազար դոլար, նրա մրցակիցը՝ երկու անգամ պակաս: Ասենք, որ Ռիոսը նման մրցումների եզրափակիչ մտավ առաջին անգամ: Չիլիացի թենիսիստը հայտնի է անմարդամոտ բնավորությամբ, մոայլ պահվածքով, զուր չէ, որ նրան է ընտրվում «Միսթր լիմոն» մրցանակը:

Համաշխարհային դասակարգման ցուցակում բարձր տեղեր զբաղեցնող շատ թենիսիստներ անհաջողության մատնվեցին այս մրցաշարում: Պարտություն կրելով հետագա պայքարից դուրս մնացին Պատրիկ Ռաֆթերը (Ավստրալիա), Գրեգ Ռուսեդսկին ու Թիմ Հենմանը (Անգլիա), Թոմաս Մուսթերը (Ավստրիա), Յոնաս Բյորկման (Շվեդիա), Մայքլ Չանգն ու Փիթ Սամփրասը (ԱՄՆ)... Հանրահայտ Անդրե Ագասին, որը ժամանակին աշխարհի թիվ 1 ռակետն էր, իսկ անցյալ տարվա վերջին հայտնվել էր դասակարգման 122-րդ հորիզոնականում, Ավստրալիայի բաց առաջնությունն սկսեց արդեն ռեյտինգ-ցուցակի 87-րդ արդյունքով: Նա մի շարք տպավորիչ հաղթանակներ տարավ, սակայն այնուհետեւ ստիպված էր զիջել Կարոլ Կուչերային (Սլովակիա): Այդուհանդերձ, Մելբուռնում մարզասերները հոնկայտ ողջունեցին այդ հանդիպման թե հաղթողին, եւ թե պարտվողին:

Իհարկե, մրցաշարը փոփոխություններ մտցրեց դասակարգման ցուցակում: Այսպես, հաղթողը Կորդան, իր միավորներն ավելացրեց 300-ով եւ բարձրացավ երկրորդ հորիզոնական: Իսկ՝ առաջինը կրկին, մեծ առավելությամբ, Սամփրասն է:

Մարտինա Հինգիսը

Պետր Կորդան

ՀՈԿԵՅ

Ուեյն Գրեցկին՝ բոլոր ժամանակների լավագույնը

Հյուսիսային Ամերիկայի հոկեյի ազգային լիգայի (NHL) բոլոր ժամանակների լավագույն հոկեյիստ է ճանաչվել Ուեյն Գրեցկին: Դա պարզ է դարձել «Հոկկե Նյուս» շաբաթաթերթի անցկացրած հարցման արդյունքները ամփոփելուց հետո: Հարցմանը մասնակցել են ճանաչված մասնագետներ, հոկեյի վետերաններ:

Գրեցկին, որի 37-ամյակը նշվեց հունվարի 26-ին, այժմ հանդես է գալիս Նյու Յորքի «Ռեյնջերս» ակումբի կազմում: Նա լիգայի ամենաարդյունավետ հարձակվողն է. իր տեւական մարզական կարիերայի ընթացքում խփել է 875 գոլ եւ 1881 գոլային փոխանցում է կատարել: Հարցման արդյունքում Գրեցկին հավաքել է 2726 միավոր: Մի փոքր է ետ մնում մեկ այլ գերաստղ՝ Բոբի Օրը (2713): «Բոստոնի» պատանին վաղուց է ավարտել իր կարիերան: Երրորդ տեղում է լեգենդար Գորդի Հոուն («Դետրոյտ»)՝ 2681 միավոր: Նա ազգային լիգայում խաղացել է 34 տարի, հանդես էր գալիս, երբ 50-ն անց էր, հաճախ՝ իր որդիների հետ: Չորրորդը Մարիո Լեմյոն է («Պիտսբուրգ»), որը հոկեյին հրաժեշտ տվեց անցյալ տարի՝ վնասվածքի պատճառով: Հինգերորդ տեղում 40-50 թվականների լավագույն խաղացողն է՝ Մորիս Ռիշարը («Մոնրեալ»):

Հետաքրքիր է, որ Գրեցկուց բացի ներկայումս գործող ուրիշ ոչ մի հոկեյիստ տեղ չի գրավել լավագույն տասնյակում: Իսկ Տորոնտոյի հոկեյի փառքի թանգարանում, որտեղ նրան հանձնվեցին արծաթագույն չմուշկներ, Գրեցկին ասաց, որ եթե լավագույնին ինքը որոշեր, ապա իր ձայնը կտար Հոուին կամ Օրրին, իսկ ինքը երբանիկ կլիներ, եթե արժանանար երրորդ տեղին:

50 լավագույնների թվում են երկու եվրոպացիներ՝ չեխ Յարոմիր Յագրը («Պիտսբուրգ»)՝ 37-րդ տեղ եւ ֆինն Յարի Կուրրին («Կոլորադո»)՝ 50-րդ տեղ:



digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Օրվա հեռանկար

ԼՂՀ

Գաղութը ինքնավարություն չէ

«Իմ կարծիքով, ԼՂՀ ղեկավարությունը պետք է ավելի բարձրաձայն ու ավելի վստահ խոսի անկախության մասին՝ ընդհանրապես բացառելով որեւէ ենթակայություն Ադրբեջանին», այս մասին ԼՂՀ հեռուստատեսությանը տված հարցազրույցում ասաց ՀՀ Աժ պատգամավոր Դավիթ Շահնազարյանը: Ըստ պատգամավորի, ԼՂՀ վերանթարկումը Բաքվին վաղ թե ուշ կհանգեցնի Արցախի հայաթափմանը եւ նման տարբերակի ինքնարկումն անգամ միամտություն է:

Անդրադառնալով այսպես կոչված «բարձր ինքնավարության» խնդրին, Շահնազարյանը նշեց. «Նախ փորձենք միջազգային իրավունքի տեսանկյունից պարզել «գաղութ» եւ «ավտոնոմիա» հասկացությունների էությունը: Եթե նշյալ կազմավորումը հնարավորություն կունենա հանրաքվեի, օրինական, ժողովրդավարական այլ ճանապարհներով դուրս գալ տվյալ պետության կազմից, ապա դա ավտոնոմիա է: Եթե նա զրկված է այդ հնարավորությունից, ապա խոսքը գաղութի մասին է: Միջոցների առաջարկությունները փաստորեն գաղութային կախվածություն են նախատեսում ԼՂՀ-ի համար: Այլ կերպ ասած, ԼՂՀ-ն Ադրբեջանի կազմից օրինական ուղիով դուրս գալու հնարավորություն չի ունենա, այսինքն Ղարաբաղին առաջարկում են ոչ թե բարձր ինքնավարություն, այլ գաղութային կազմավորման կարգավիճակ», ընդգծեց Դ. Շահնազարյանը:

Մինչեւ 1994-ը, ըստ պատգամավորի, ղարաբաղյան խնդրի կարգավորումն ընթանում էր մի քանի ասյաններով. Մինսկի խմբից բացի, խաղաղ նախաձեռնություններով հանդես էին գալիս նաեւ ՌԴ-ն, Ղազախստանը, Իրանը, եւ նրանց միջեւ գոյություն ունեցող որոշակի մրցակցությունը դրական դեր խաղաց կարգավորման գործընթացում ընդհանրապես, եւ Ադրբեջանի հետ զինադադար կնքելու խնդրում մասնավորապես: Այսօր, ցավոք, իրավիճակը էապես տարբերվում է 1994-ի կացությունից: Ներկայումս խնդրի կարգավորումը մենաշնորհել է նույնիսկ ոչ թե Մինսկի խումբը (նա փաստորեն արդեն գոյություն չունի), այլ Եվրանախագահությունը: Ըստ Դ. Շահնազարյանի, ներկայումս առկա է երկու վտանգ. մեկ տարուց ավելի դադարել են բանակցությունները ու, երկրորդը՝ մեծացել է ռազմական առճակատման վերսկսման վտանգը»: Ստեղծված կացությունը, ըստ Շահնազարյանի, նաեւ ՀՀ անհետաձգ արտաքին քաղաքականության արդյունքի է:

ՎԱՀԲԱՏ ԱՂԱՋԱՆՅԱՆ
Ստեփանակերտ

ԱՆԳՐԱԴԱՐՁ

Երբ գումարվում է նաեւ ՂԱՎ-ի վտանգը

«Ազգ»-ի հաբաթյա մեր համարում տպագրված «Երբ կենսաբանական զենքը քայլում է քո կողքին» մեր հրապարակման մեջ տեխնիկական պատճառներով պայմանավորված մի շարք բացթողումներ թուլացրել են հոդվածի հարցադրման սուրությունը: Բանն այն է, որ նույն օրը տեսահաղորդումների միջոցով մեզ հայտնեցին, որ բժշկական հետազոտությունների արդյունքների համաձայն հաստատվել է, որ մեր հոդվածի պակիսանցի «հերոսի» մոտ առկա է ՂԱՎ-ի (սպիդ) հավանականություն: Հայտնի է, որ նման դեպքում (հատկապես երբ զուգակցվում են այլ վարակիչ հիվանդություններ, տվյալ դեպքում՝ քոս) երկրում հայտնված անկոչ հյուրը օրենքով վտարվում է:

Ինչ վերաբերում է փախստականների վարչության մի շարք աշխատակիցների պնդումին, որ գոյություն ունի քոսի ոչ վարակիչ, անվնաս փուլ՝ դա առնվազն ծիծաղելի է: Այս պարագայում պիտի հերոսություն որակել պրն աշխատակցի՝ անտեղյակներին իր ասածի մեջ համոզելու ջանքերը, երբ պակիսանցու «բարեկամական» թփթփոցները ուսերին՝ նա ընդունում էր գնահատելի զսպվածությամբ: Միգուցե նա իր ասածին հավատում էր նույնքան, որքան օտարերկրացին՝ որ ինքն առողջ է: Իսկ ավելի վաղ մեր հարցումին՝ ինչպե՞ս է վերջինիս քրիստոնյայի խիղճը թույլ տալիս վնասել մարդկանց, պակիսանցի հյուրը պատասխանում էր անհեթեթ հորինվածքներով:

Առհասարակ ցանկացած վարակիչ հիվանդության համար գոյություն ունի կարանտինային շրջան, որ կախված չէ անձի կարգավիճակից եւ գտնվելու վայրից: Այն պարտադիր է բոլորի համար եւ տեղաշարժելու իրավունքի սահմանափակումը կարող է հանցագործության վերածվել: Փախստականների վարչության հաշվետվությամբ մինչեւ անցած տարի գտնվում Մասիսի ընդունման կայանը (հիմնադրված 1946-ի ներգաղթից ի վեր), որը, սակայն, ներկայումս պարզ չէ՝ ո՞ւմ է պատկանում: Մինչդեռ հետազոտությունների անցկացման եւ կարանտինային շրջանում գտնվողների համար հատուկ կացարան է պետք:

Ա. Գ.

Սիլվա Կապուտիկյանը՝ «Տարվա միջազգային կին»

Վերջերս Քեմբրիջի «Անգլիա» կենսագրական կենտրոնի մրցանակային հանձնաժողովի նախագահ Նիկոլաս Ս. Լոուն բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանին շնորհավորական նամակ է հղել, որի մեջ մասնավորապես ասված է

Դուք արժանացել եք 1997-98-ի «Տարվա միջազգային կին» կոչմանը: Այս ոսկրսակավոր պարգեւը դիպլոմի ձեւով տրվում է միայն մի քանի ականավոր անհատների, որոնց նվաճումներն առանձնանում են միջազգային չափանիշներով:

«Տարվա միջազգային կին» պարգեւատրությունն իրականացնում են Միջազգային կենսագրական կենտրոնի խմբագրական եւ խորհրդատվական խորհուրդները, որոնք յուրաքանչյուր տարի ընտրում են տասնյակ հազարավոր կենսագրություններ, եւ սրանց մի քանիսն ներառվում են աշխարհի այդ յուրահատուկ պատվին

ԵՐԵՎԱՆ - ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Դրամն այլեւս քաղաքական կյանքի ինդիկատոր չէ՞

Հայաստանում քաղաքական փոփոխատեւ լուրջ իրադարձությունը մինչեւ այժմ՝ ուղեկցվել է տեղական դրամի կտրուկ թռիչքներով եւ նույնքան կտրուկ անկումներով: Այս տխուր ավանդույթը հայկական տնտեսությունում ներմուծված լինելու փաստը թեեւ կարելի է կասկածի ենթարկել, ասելով թե քաղաքական վայրիվերումներն այն կարեւոր գործոնն են, որ ցանկացած երկրում անպայմանորեն ազդում են մասնավորապես տարադրամի փոխարժեքի վրա, սակայն վերջին տարիների ընթացքում հայկական արժութային շուկայի ժամանակագրությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ համենայն դեպս մեզանում դա այլ արմատներ ունի: Եվ առնվազն փորոգություն կարելի էր համարել ՀՀ ԿԲ-ի ղեկավարների՝ դրամի ցատկերի կազմակերպումը փոխանակման կետերի վգին փաթաթելու փորձերը, երբ կասկած չէր հարուցում միասնական ճակատով նրանց հանդես գալը:

Այնուհանդերձ, հայկական քաղաքական կյանքի բարձրակետին հասնելը այս անգամ կարծես չի ուղեկցում դրամի տատանումներով: Եվ դա այն դեպքում, երբ հրաժարականների շերթ է ԿԲ-ի նախագահի մասնակցությամբ, իսկ հանրապետությունից դուրս առավող արտարժույթի ծավալները մեծ: Դժվար է ասել՝ սա անձամբ վարչապետի՞ կարծր դիրքորոշման արդյունքի է, թե ոչ, սակայն փաստ է, որ այսօրվա պարարտ հողի պայմաններում դրամը չի աճում սառնաարտորեն հետեւելով իրադարձությունների ընթացքին: Հուսանք, որ դրամի այս քաղաքականությունը կայուն կլինի:

Հ. Գ. Երեկոյան դոլարի փոխարժեքը աճել էր 3 դրամով՝ 502-504:

ԱԲ. Ս.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հարավ-արեւմտյան «Ա-1» թաղամասի ունիվերսամում մեծամանակ եւ մանրածախ վաճառվում են ուկրայականից զգալիորեն էժան արտասահմանյան ժակետներ եւ սվիտեր (տղամարդու եւ կանացի):

Հեռ. 73-80-98, 52-05-89:

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
3 սենյականոց բնակարան
Նորքի V զանգ.,
հեռ. 64-93-89, 64-88-85

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
4 սենյականոց բնակարան (Դավիթաշեն, II թաղամաս, 3-րդ շենք, բն. 4):
Զանգահարել 72-89-83

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
4 սենյականոց բնակարան 115/70 քմ, Չարենցի 52, 3 հարկանի քարե շենքի 2-րդ հարկում:
Հեռ.՝ 55-66-56

ԲԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
օժանդակության հիմնադրամ-Հայաստան
Արեւելք-արեւելք ծրագիրը
հայտարարում է մրցույթ

մասնակցելու «Արդեն ժամանակն է» խորագրով սեմինարին, որը տեղի կունենա մարտի 14-23-ը, Մոսկվայում (Ռուսաստանի Ֆեդերացիա):
Միջոցառման նպատակն է կլոր սեղանի շուրջ հավաքել տարբեր երկրների դպրոցականների քննարկելու այնպիսի հարցեր, ինչպիսիք են.
գոյություն ունեցող «անծանոթը թշնամի է» ստերեոտիպի հաղթահարում,
միջէթնիկական պրոբլեմների առաջացման ընդհանուր պատճառները,
«աշխարհի քաղաքացի» հոգեբանական գաղափարը:
Սեմինարը նախատեսված է 14-17 տարեկան դպրոցականների համար, որոնք հետաքրքրվում են արվեստով եւ երաժշտությամբ: Պահանջվում է անգլերենի գերազանց իմացություն:

Դիմումներն ընդունվում են մինչեւ 1998 թ. փետրվարի 16-ը:
Անհրաժեշտ է ներկայացնել.

- ինքնակենսագրություն
- երաշխավորագիր
- հիմնավորում, թե նշված միջոցառումը որքանով է օգտակար մասնակցի համար:

Ավելի մանրամասն տեղեկությունների համար դիմել Հասմիկ Բեգլարյանին Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ-Հայաստան, հետեւյալ հասցեով.

Այգեձորի 53 բ
Հեռ. 272119, 271713

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
օժանդակության հիմնադրամի Հայաստանի մասնաճյուղ
Արեւելք-արեւելք ծրագիրը
հայտարարում է մրցույթ

մասնակցելու «Երիտասարդական կազմակերպությունների առաջնորդներ» խորագրով սեմինարի, որը տեղի կունենա մարտի 2-6, 1998, Վիլնյուսում (Լիտվա):
Ծրագրի նպատակն է զարգացնել նախկին խորհրդային երկրների երիտասարդական կազմակերպությունների միջազգային համագործակցությունը մարդու սոցիալական եւ քաղաքական իրավունքների ասպարեզում:
Մրցույթին կարող են մասնակցել երիտասարդական կազմակերպությունների առաջնորդները:

Դիմումները ներկայացնել մինչեւ փետրվարի 16-ը:
Անհրաժեշտ է ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը.

- ինքնակենսագրություն
- երաշխավորագիր
- հիմնավորում, թե նշված միջոցառումը որքանով նպաստում մասնակցի հետագա գործունեությանը

Մանրամասն տեղեկությունների համար դիմել Հասմիկ Բեգլարյանին Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի Հայաստանի մասնաճյուղ, հետեւյալ հասցեով

Այգեձորի 53 բ
Հեռ. 272119, 271713

ԲԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
օժանդակության հիմնադրամի Հայաստանի մասնաճյուղ
Ճանապարհորդական գրանտների ծրագիրը

հայտարարում է 1998 թ. երկրորդ մրցույթը, որը կընդգրկի մայիս եւ հունիս ամիսները: Հիշեցնում ենք, որ այս ծրագիրը հնարավորություն է տալիս հայ մասնագետներին (ուսանողներ, գիտնականներ, մշակույթի ասպարեզի ներկայացուցիչներ) մասնակցել միջազգային, ազգային եւ տարածաշրջանային կարեւորության գիտաժողովների, սեմինարների, կոնֆերանսների, կոնգրեսների, ցուցահանդեսների, կրթական եւ գիտական մրցույթների:

Դիմումները ընդունվում են մինչեւ 1998 թ. մարտի 6-ը:
Մանրամասն տեղեկությունների համար դիմել Հասմիկ Բեգլարյանին, Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի Հայաստանի մասնաճյուղ, հետեւյալ հասցեով.

Այգեձորի 53 բ
Հեռ. 272119, 271719

Ինքներդ ձեզ նվեր
մատուցեք մարտի 8-ի առթիվ՝ արագորեն նիհարեք:
Զանգահարել
58-36-49
ժամը
11-13-ը եւ
19-21-ը:

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
հեռախոսով (589167, 581351) - պարբերաբար հրատարակվող տեղեկագրքերով - մագնիսական սկավառակներով - INTERNET ցանցով (http://www.arminco.com/spyur)

«Միգրան Մեծ» հրատարակչության տպարան. Երեւան-23, Մրշակունյաց 2. Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատուեր 752. Տիրաժը՝ 3000. Ստորագրված է տպագրության 3.02.1998. Գինը 100 դրամ

digitised by A.R.A.R.@